91.54-5
S-16

ՍՏՈՒԳՎԱԾ է

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼՍՏԵԱՆԻ № 39

ՍՏՈՒԳՎԱԾ է 1958

ԳՐԱԲԱՐԻ

ՀՈԼՈՎՈՒՄԸ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

ԵՒ ՆԱԽԴԻՐՆԵՐԸ

ԿԱՋՄԵՑ

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ

ԵՐԿՐՈՐԴ ԲԱՐԵՓՈԽՈՒԱԾ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ

ԷԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՍ. 7·

1910

2001082191

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՀՆՉԱԿՅԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒ

116562

~~21250~~ 35454

~~34454~~

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ներսիսեան հոգևոր դպրանոցում հայերէն լեզուի դասատուութիւնն ստանձնելով՝ շուտով զգացինք քերականութեան յարմարաւոր ձեռնարկի պակասութիւնը, այնպիսի քերականութեան, որ լեզուի ստուգաբանութեան և համաձայնութեան կանոններն առաջարկէր աշակերտներին ոչ թէ իբրև անգիր սովորելու նիւթ, այլ բացատրէր և, աշակերտին մատչելի չափով, հետազօտէր այդ կանոնները, զգալ տար, որ լեզուն մի կամայական երևոյթ չէ, այլ գիտութիւն է, հիմնուած, ինչպէս և ամեն գիտութիւն, որոշ օրէնքների վերայ։ Այս սկզբունքով կազմուած ձեռնարկը հարկաւոր է՝ որպէս զի աշակերտը հետաքրքրուի լեզուի ուսումով, գիտակցաբար և դիւրաւ սովորի և միանգամայն զարգանայ։

Այսպիսի քերականական ձեռնարկի փորձը մեր մէջ առաջին անգամ արել է Գ. Կարապետ Կոստանեանը («Գրաբառ բայերի խոնարհումը մի աղիւսակի մէջ», «Գրաբառի հոլովումը մի աղիւսակի մէջ». վերջինում Գ. հեղինակը աշխատել է կանոնի տակ դնել այլ և այլ հոլովիչների գործածութեան պայմանները, և առանձին աղիւսակում զետեղել է բոլոր բառերը, որոնք բացառութիւն են կազմում այդ կանոններից—ծանր և շնորհակալութեան արժանի գործ)։ Մերը երկրորդն է, որ իւր նախորդից բաւական տարբեր է թէ նիւթի բովանդակութեամբ, թէ տեսականով և թէ աւանդելու ոճով։

Որոշելով մինչև դեկտեմբերի արձակուրդներն այս ձեռնարկը տպուած տալ աշակերտների ձեռքը՝ ժամանակի սղութեան պատճառով մենք ստիպուեցանք

բաւականանալ առ այժմ ամենակարևորովը—հոլովումներով և խոնարհումներով և նոցա փոփոխութիւնները բացատրող համառօտ ձայնագիտութեամբ. աւելացրինք և նախդիրները, որոց տարբեր նշանակութիւնները այլ և այլ հոլովների հետ գործածուելիս՝ մեծ դժուարութեամբ են ըմբռնում աշակերտները։ Մենք չկարողացանք աւելի ընդլայնել ձայնագիտութիւնը և մոցնել համեմատութեան նիւթ նոր գրականական լեզուից և գաւառական բարբառներից. նոյնպէս չզետեղեցինք բացառութիւնները թէ շեշտաբանութեան և թէ հոլովումի ու խոնարհումի մէջ և չհամեմատեցինք նոր լեզուային ձևերը գրաբարի ձևերի հետ, թողնելով սոքա և ուրիշ շատ հետաքննական նիւթեր ապագայ աւելի ազատ ժամանակի։

Հարկաւոր ենք համարում աւելացնել, որ այս ձեռնարկը, ինչպէս բովանդակութեան, նոյնպէս և մշակումի կողմից՝ զերծ չէ թերութիւններից, որոնցից դժուար էր խոյս տալ՝ մի ամսուան մէջ սակաւաթիւ և կցկտուր ժամերում կատարուած աշխատութեան մէջ։ Համեմատական լեզուագիտութիւնը գուցէ դատապարտէ մի քանի բացատրութիւններ այս ձեռնարկում (բաղաձայն հոլովումի, բայերի արմատների մէջ ևն). բայց մենք նախընտրեցինք գիտական ճշտութիւնը տեղ տեղ զոհել պարզութեան և աշակերտների զարգացման աստիճանին։

Ձեռնարկիս § 55, ծան. 2 և 3 և § 56, ծան. 1. կազմելիս օգտուել ենք Գ. Կոստանեանի «Գրաբարի հոլովումից» (յօդ. 22, ա, 24, ա, 26, ա), իսկ §10-ի և § 66-ի, ինչպէս նաև նախդիրների օրինակները մեծ մասամբ առել ենք Բագրատունու Զարգացեալոց քերականութիւնից։

Ս. Մ.

14 Նոյեմբերի, 1890.
Թիֆլիս։

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ.

Դասագրքիս այս երկրորդ տպագրութեան մէջ պահպանուած են նոյն ծաւալը, դասաւորութիւնը և սիստեմը. միայն ուշադրութեամբ աչքէ ենք անցրել բոլոր նիւթը և շատ տեղ բարեփոխութիւններ մտցրել, լրացնելով, արտայայտութիւնները ճշտելով և որոշ կանոններ աւելի բացայայտ և դիւրըմբռնելի կերպով խմբագրելով, ինչպէս ցոյց է տուել մեզ տարիների փորձը։ § 58-ի 2 և 3 ծանօթութիւնները խմբագրել ենք՝ օգտուելով պ. Ա. Զամինեանի Դիտողութիւնից («Հանդէս Ամսօրեայ», 1909, փետրվար, եր. 63—64)։

Ստ. Մ.

1 հոկտեմբերի 1909,
Թիֆլիս։

ԳՐԱԲԱՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ ԵՒ ՆԱԽԴԻՐՆԵՐԸ

Ա. ՁԱՅՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Գլ. Ա. ՎԱՆԿ.

§ 1. Վանկ կոչվում է այն բառը կամ բառի այն մասը, որ արտասանվում է մի անգամից, պարզ կամ երկբարբառ ձայնաւորի հետ. օր. մի, օր, բա-րի, գե-ղեց-ման, քա-ղա-քա-մայր, պաշ-տօ-նեայ, նե-դու-թեան, հա-ճոյ, դիւ-րին։ Ա-րև, ի-ջա-նել, ու-շիմ։

ԾԱՆ. Պարզ ձայնաւորներն են ա, ե, է, ը, ի, ո, օ, ու. երկբարբառներն են այ, ոյ, եայ, իւ, ստ։

§ 2. Որովհետև ը ձայնաւորը մեծ մասամբ չէ գրվում, բայց արտասանվում է՝ ուստի շատ անգամ բառերն ունին աւելի վանկեր, քան գրուածքի մէջ երևում են ձայնաւոր գրեր. այսինքն ը ձայնաւորն էլ վանկ է կազմում, թէպէտ ներգործութեամբ դրուած չէ. օր. բանն (բա-նը-ն) զոր պատուիրեցեր. ահա այրդ (այ-ը-ը-դ),

ցծեզ (ցը-ձեզ). կրկին (կըրկին), սկիզբն (ըս-կիզ-բըն), ստանալ (ըս-տա-նալ), սնունդ (սը-նունդ), սրբել (սըր-բել), հատուցումն, բղխումն (հատու-ցու-մըն, բըղ-խու-մըն), ոսկր (ոս-կըր), աստղ (աս-տըղ), կայսր (կայ-սըր)։ Այս տեսակ վանկերը կոչվում են ծածուկ վանկ։

§ 3. Վանկերը կոչվում են բաց՝ երբ վերջանում են ձայնաւոր գրով. օր. բա-բի, ե-կի, ա-բա, քա-դա-քա-ցի ծա-ռայ։ Կոչվում են փակ՝ երբ վերջանում են բաղաձայն գրով. օր. աղ-քատ, ջուր, թագ-չիմ, սուրբ։

§ 4. Եթէ ծածուկ վանկից անմիջապէս առաջ կամ յետոյ ձայնաւոր տառ գայ՝ այդ վանկը կարող է սղուել. օր. գանձդ ողորմութեան (գանձ-դո-ղորմութեան). բղխումն ի հօրէ (բըղ-խում-նի հօրէ). աստղ առաւօտու, (աստ-ղա-ռաւօտու), կամի ստանալ (կա-միս-տանալ)։

Գլ. Բ. ՇԵՇՏ.

§ 5. Շեշտ կոչվում է ձայնի սաստկութիւնը, որով հնչվում է բառի մէջ ձայնաւոր տառը. օր. տուր ինձ, թագաւոր է թագաւորէ։ Շեշտի նշանն է այս (՛), որ սովորական գրութեան մէջ չէ գործածվում, բացի հրամայական եղանակներից, արգելական մակբայից և անուղղակի հարցական ձևերից, օր. տուր, մի տար; տեսէք, որչափ սիրէր զնա։

§ 6. Շեշտը լինում է երկու տեսակ, իմաստի և բառի։

Իմաստի շեշտը խօսքի մէջ ընկնում է այն բառի վրայ, որի մէջ կենդրոնանում է խօսքի գլխաւոր իմաստը, կամ որի վրայ առանձին ուշադրութիւն է դարձնվում, որ մանաւանդ պատահում է հակադրութեան ժամանակ. օր. ծանեաւ ՝ՀՆ զստացիչ իւր, և Էշ զմսուր տեառն իւրոյ, բայց Իսրայէլ զիս ոչ ծանեաւ։ Ի՛մ է վրէժխնդրութիւն։ ԶքնՀ տեսանեմ լինել այսպիսի։

§ 7. Եթէ խօսքի մէջ հակադրութիւն չկայ՝ իմաստի շեշտը գտնվում է բայի վրայ. օր. որդիս ծնայ և բարձրացուցի, և նոքա զիս անարգեցին։ Զերկեամ մի տուաւ ի կապանս։

§ 8. Բառի շեշտ ունին բոլոր բառերը, քիչ բացառութեամբ։ Այս շեշտը գրաբարում գտնվում է բառի վերջի վանկի վրայ. օր. Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին։

§ 9. Բառավերջում գտնուող ծածուկ վանկերը (§ 2), որոնք կարդացվում են ը ձայնաւորով՝ շեշտ չեն ընդունում. այս դէպքում շեշտը գտնվում է նախընթաց վանկի վրայ. օր. կինս (կինըս) զոր եառուր։ Որոց ոգիքն (ոգիքըն) թուլացեալ են։ Զանսպասն խաղացմունն(ը)ս առուտուածայնոց(ըն) շնորհաց ծանեայ ի ձեռ(ը)ն գեղեցիկ խնդրոյս։

§ 10. Մի քանի բարդ և ածանցուած բառեր պահում են շեշտը բարդութեան առաջին

մասի վրայ. սրանք են. այսպէս, սոյնպէս, որ-պէս. այսչափ, որչափ. այսքան, այսգոյն, այլ-ազգ, յայնժամ, քանիօն, գրեթէ (գրեա-թէ), հնապա, բարէ, անհաւասիկ (անհա-աւասիկ), աւա-սիկ, նոյնժամայն, այսորիկ, այսոցիկ—բոլոր դէմքերում։ Այս բառերը, նայելով, թէ որտեղ է գտնվում շեշտը՝ կոչվում են յարաշեշտ (վեր-ջից երկրորդ վանկում) և նախայարաշեշտ (վեր-ջից երրորդ վանկում)։

§ 11 Մի քանի կարճ բառեր ամենևին շեշտ չունին և կոչվում են անշեշտ. սրանք են—

ա) յարաբերական և անորոշ դերանունները որ, իմն, ինչ, մի. օր. որ սպանանէ զհայր՝ մա-հու մեռցի. Որոց ոգիքն. Մեծ իմն. Գեղեցիկ իմն. Բազում ինչ ասեմ. Բարւոք ինչ իցէ. Այր մի։

բ) ի, առ, ընդ, ըստ նախդիրները և իբրև, որպէս, քան, մինչև, վասն նախադրութիւն-ները. օր. ի տուն. ի լինել. առ ի լինել. առ նախանձու. ընդ դուռն. ընդ աչմէ. ըստ նմանէ. իբրև զիս. որպէս ծառ. քան զամենայն մեծու-թիւն. քան զակնոս պատուականս. մինչև ի տուն. մինչև ցայս վայր. վասն իմ. վասն այ-սորիկ։

գ) եմ բայը՝ երբ իւր բուն նշանակութիւնն ունի. օր. նա է. յաշխարհ գալոց էիր. տեսեալ է. ընկեցեալ լինէր այնուհետեւ։ Իսկ երբ եմ բայը նշանակում է կամ, զոյութիւն ունիմ՝ առ-նում է շեշտ. օր. է նա. է Աստուած. Ե՛ն որ ի ծակս, են որ ի սորս զոգեալ թագչին։

դ) զի, թէ, եթէ, եւ, կամ շաղկապները. օր. զի ոչ գոյր. ոչ գիտէին, թէ գալոց է. եթէ ակն քո չար է. և ասաց Աստուած. եղբայր կամ քոյր։

§ 12. Միմեանց հետ կապակցութիւն ունեցող բառերից երբ նախադասը շեշտուած է՝ վերջադաս բառը, եթէ միավանկ կամ երկավանկ դերանուն լինի՝ շեշտը կկորցնէ. օր. վասն մեղաց քոց. յաթոռ նորա. եթէ ասիցէ ոք. ասէ ցնա. յափշտակեցան ստացուածք նոցա։ Հայր մեր, որ յերկինս ես։

§ 13. Սաստիկ շեշտուած բառերից յետոյ, այսինքն հարցական, բացասական, հրամայական բառերից և առհասարակ իմաստի շեշտից յետոյ հետևորդ բառը շեշտը կորցնում է. օր. զի կոչէք զիս. ընդէր խռովեցան հեթանոսք. ոչ գիտէր, զինչ գործէր. ոչ այդպէս. ոչ լռեցից. չիք թագաւոր. մի դատիք. մի ընկենուր։ Ե՛ս ասացի (և ոչ դու). բազումք յօժարեցին. յանգիստ կորուստն յուզարկի ի մահուան իւրում։

ԳԼ. Դ. ՇԵՇՏԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՁԱՅՆԱՒՈՐՆԵՐԻ ՎՐԱՑ

§ 14. Բառերը դարաւոր գործածութեան ընթացքում հետզհետէ կարճանում են։ Սերունդէ սերունդ նրանց մէջ թուլանում, անհետանում են ձայնաւոր և բաղաձայն գրերը. այն-

պէս որ նախկին երկար բառից վերջապէս ստացվում է կարճացած, սղուած բառ։ Օրինակ առաջ ասում էին Աստուած. այս բառը հետզհետէ կրճատուելով դարձաւ Աստած, Աստծ, Աստծ։ Առաջ ասում էին Աստուածոյ. սա հետզհետէ կրճատուելով դարձաւ Աստուծոյ, Աստրծոյ, Աստրծու, Աստծու, Աստծու, Աստու, Աստու։ Առաջ ասում էին ճանապարհ. սա հետզհետէ դարձաւ ճանրպարհ, ճանրպահ, ճանպահ, ճամբահ, ճամբա։ Ճանապարհորդ բառը հետզհետէ կրճատուելով դարձաւ ճամբորդ։ Տեսանեմ բառը դարձաւ տեսնեմ, տեննեմ, տէնեմ են։

§ 15. Այս կրճատումը կատարվում է որոշ օրէնքներով։ Գլխաւոր օրէնքը այս է. բառի մէջ այն վանկը, որ շեշտ ունի՝ աւելի ուժեղ է արտասանվում, աւելի լաւ է լսվում, ուստի աւելի լաւ է պահպանվում. իսկ այն վանկերը, որ շեշտ չունին, մանաւանդ շեշտուած վանկի երկու կողմը գտնուած վանկերը, թոյլ են արտասանվում, վատ են լսվում. ուստի քիչ են պահպանվում ու սղվում են։ Օրինակ. թագաւոր բառում վերջի վանկը շեշտ ունենալով՝ պահպանուել է, իսկ նախընթաց վանկը անշեշտ լինելով սղուել է, և ստացուել է գաւառական թագվոր, թաքվոր։ Ուրիշ գաւառում նոյն բառը հնչուել է թագաւոր. այստեղ էլ պահպանուել է միջի, շեշտուած վանկը, իսկ նրա երկու կողմի անշեշտ վանկերը սղուել են, և ստացուել է թրքաւվոր, թրյաւվոր։ Հարսանիք բառը մի գաւա-

ռում արտասանուել է «հարսանիք», ուստի սրդ-ուելով դարձել է հարսնիք. իսկ ուրիշ գաւառներում արտասանուել է հարսանիք, ուստի սրդուելով դարձել է հրսանիք ևն։

Այս օրէնքով գրաբարի մէջ այն վանկերը, որոնց վրայ ընկնում է շեշտը՝ աւելի են պահպանվում և աւելի լիակատար հնչիւն ունին. իսկ այն վանկերը, որոնք շեշտ չունին՝ աւելի են ենթարկվում սղումի և անհետանում են։ Օր. սուրբ—սրբել. առաջի բառում ու ձայնը շեշտ ունենալով՝ մնացել է. իսկ երկրորդ բառում շեշտը տեղափոխուելով ել վանկի վրայ՝ ու ձայնաւորն առանց շեշտի սղուել դարձել է ը։ Նոյնպէս կին—կընոջ—կնոջ. մարմին—մարմընոյ—մարմնոյ և այլն։

§ 16. Բառերը հոլովուելիս և խոնարհուելիս՝ իրանց վերջից ստանում են մասնիկներ. և որովհետև շեշտը, համաձայն լեզուի օրէնքին՝ պէտք է դրուի բառի վերջին վանկի վրայ՝ (§ 8) ուստի շեշտը բառի հոլովուելիս և խոնարհուելիս տեղափոխվում է այդ նոր մասնիկների վրայ։ Այս տեղափոխութեան պատճառով բառի այն վանկը, որ առաջ շեշտ ունէր, շեշտը կորցնելով՝ յաճախ սղվում է. օր սէր բառը փոխվում է սիրոյ, սիրեմ, բայց՝ մարդասէր. միտ—մըտի, մտից, մտանեմ, բայց՝ եմիտ և այլն։ Վերջի օրինակից երևում է, որ երբ խոնարհուելու ժամանակ բառը ստանում է այնպիսի ձև, որ մասնիկ չունի, ուրեմն և շեշտը նորից ըն-

կնում է բուն արմատական ձայնաւորի վրայ՝ այդ արմատի նախնական ձայնաւորը նորից երևան է գալիս (եմոլտ)։

§ 17. ա, ե, ո, ուժեղ ձայնաւորները, վերջի փակ վանկում գտնուելիս, երբ շեշտը կորցնում են՝ փոփոխութեան չեն ենթարկվում շեշտի պատճառով. օր. քաղաք—քաղաքի. բանակ—բանակի, բանակիմ, բանակեցայ. մեծ—մեծի, մեծանամ, մեծացուցանեմ. տես, տեսոյ, տեսանեմ, տեսանելի. գործ—գործոյ, գործեմ, գործեցի, գործողութիւն. խաղող—խաղողոյ—խաղողաբեր։

Այս ձայնաւոր գրերը գոյականների վերջում բաց վանկում ամենևին չկան, այլ եթէ գտնուին՝ փոխվում են ուրիշ ձայնաւորի կամ երկբարբառի օր. Արամ-ա-յ, օղ-ո-յ։ (Ա պատահում է միայն իա վերջաւորութեան մէջ. օր. Երեմիա, Գաղդիա, Ամասիա)։

ԾԱՆ. 1. Բայերի մէջ ո և ա պատահում են միայն հրամայական եղանակում—մատո, արա։

ԾԱՆ. 2. Ե դիրը մի քանի տեղ, մանաւանդ երբ հետևում է նորան ղ, բաղաձայն սղվում է ը գրի և անհետանում է. օր. ասեղն—ասղան. թեթե՛ղն թիթղան. Բաբսեղ (սղի), Կիւրեղ (ղղի), մժեղ (մժեխ) (մժղոյ). նոյնպէս դեւ (դիւ)։

§ 18. Ի և ու ձայնաւորները, որոնք գտնվում են բառի վերջին վանկում՝ շեշտը կորցնելիս փոխվում են ը, որ շատ անգամ սղուելով բոլորովին անհետանում է. օր. գին—գընոյ (գնոյ), սիրտ—սըրտի (սրտի). գինդ—գընդի (գնդի).

խինդ—խընդալ (խնդալ). Դաւիթ—Դաւ-թի. գաւ-իթ—գաւ-թի. թաքուստ թաքստի. աճումն—աճ-ման, սիրբ—սրբոյ, սրբեալ (սրբոյ, սրբել). գինդ գնդի (գնդի). գիտ—գտի, գտանել (գտի, գտել). հեղումն—հեղ-ման. տիրն—* տրան [1]) տան և այլն։

ԾԱՆ. 1. Այս կանոնի համաձայն սղվում են և այն բառերը, որոնք վերջանում են ի ձայնով. թիւ (=թիվ), սղուելով դառնում է թվվոյ, թվոյ, որ լեզուի ուղղագրական կանոնով գրվում է թուոյ։ Այսպէս նաև անի՛ւ—անու-ոյ, հազի՛ւ—հազու-ագիւտ են։

ԾԱՆ. 2. Ուխտ, ուստր են բառերում ու ձայնը անշեշտ վանկում չէ սղվում։

§ 19. Վերջին փակ վանկում եղած է ձայնաւորը շեշտը կորցնելով դառնում է

1) ի. օր. սէ՛ր—սիրոյ—սիրել. յաւէ՛տ—յաւիտեան, ձէ՛թ—ձիթենի. դէ՛տ—դիտի, դիտել։

2) դառնում է և ե, մանաւանդ օտարազգի յատուկ անունների մէջ. օր. Իսրայէ՛լ—Իսրայելի (և Իսրայիլի). Կայէ՛ն—Կայենի, Միքայէ՛լ—Միքայելի, Մովսէ՛ս—Մովսեսի (և Մովսիսի). կայ նոյնպէս եղէ՛ն—եղեգան, ապուէ՛ս—ապուեսու։

§ 20. Վերջին փակ վանկում գտնուող եա երկբարբառը շեշտը կորցնելիս դառնում է ե. օր. մատեա՛ն—մատենի. որեա՛ր—որերոյ, սեա՛մ—սեմոյ. եղեա՛մն—եղեման, կեա՛նք — կենաց, կեա՛մ—կեցի։

---

[1]) Աստղանիշով նշանակուած ձևերը գրաբարում չեն պատահում, բայց ենթադրվում են իբրև եղած։

ԾԱՆ. Այս սղումով բացատրվում է և բարդ բառերի մէջ պատահած ե գիրը արմատական ի գրի տեղ. բարեսէր=բարեասէր=բարի-ա-սէր (§ 26, դ.). ընտանեկան=ընտանեական=ընտանի-ա-կան։

§ 21. Վերջին փակ վանկում գտնուող ոյ երկբարբառը շեշտը կորցնելիս դառնում է ու, օր. թոյն—թունաւոր. լոյս—լուսոյ,— լուսաւոր. փոյթ—փութոյ, փութալ. ողջոյն—ողջունի, ողջունել. մոյծ—մուծի, մուծանել ևն։

§ 22. Փակ վանկում գտնուող իւ երկբարբառը, որից յետոյ գալիս է Ն՝ շեշտը կորցնելիս դառնում է ի. օր. արիւն—արեան (=արի-ան, § 26 դ), կորիւն—կորեան. նեղութիւն—նեղութեան և այլն։

§ 23. Վերջին բաց վանկ կազմող եայ (և եա) երկբարբառը շեշտը կորցնելիս դառնում է ե. օր. պաշտօնեայ—պաշտօնէի. միջօրեայ—միջօրէի. դուզնաքեայ դուզնաքէի. հրեայ—հրէի, քրիստոնեայ—քրիստոնէութիւն։

ԾԱՆ. Այս փոփոխութիւնը պատահում է և շեշտի տակ եղած վանկում. որովհետև լեզուն հետզհետէ մաշուելով՝ (§ 14) երկբարբառը վերածում է պարզ ձայնաւորի. օր. միջօրեայ և միջօրէ. աշտեայ և աշտէ։ արծաթեայ և արծաթէ ևն։ Համեմատել աշխարհաբարի ձևերը՝ երկաթէ, պղնձէ, գործէ, սիրէ։

§ 24. Պատկերը շեշտաւոր և անշեշտ ձայնաւորների։ (Գիծը (-) նշանակում է, թէ ձայնաւորը կորսուած է)։

	Փակ վանկում									Բաց վանկում
Շեշտուած դառնում է անշեշտ	ա	ո	ե	ի	ու	է	եայ	յի(ն)		եայ | է
	|	|	|	|	|	|	|	|	|	
	ա	ոե(ը)	ը,-	ը,-	ի,ե	ե	ու	ի		
Անշեշտ դառնում է շեշտուած	ա	ո	ե	ի	ու	ը,-				է | եայ
	|	|	|	|	|	|				
	ա	ո	ե,եա,է	է,յի(ն)	ոյ	ի,ու				

Գլ. Դ. ԳՐԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՄԻՄԵԱՆՑ ՄՕՏ ՊԱՏԱՀԵԼԻՍ

§ 25. Ձայնաւոր և բաղաձայն գրերից ոմանք միմեանց մօտ պատահելիս՝ ենթարկվում են մէկը միւսի ազդեցութեան և այլ և այլ փոփոխութիւններ են կրում։ Այս փոփոխութիւնները առաջ են գալիս ներդաշնակութեան օրէնքով (որպէս զի արտասանելը դիւրին լինի), և շատ տեսակ են։ Այստեղ դրուած են միայն այն փոփոխութիւնները, որոնք բառերի հոլովումի և խոնարհումի ժամանակ տեղի են ունենում։

§ 26. Ձայնաւոր գրերի մէջ, հոլովելու և խոնարհելու ժամանակ, հետևեալ փոփոխութիւններն են տեղի ունենում.

ա) Ի թոյլ ձայնաւորը ա, ո ուժեղ ձայնաւորների մօտ պատահելիս, եթէ շեշտ չունի

աղվում է և այդ ձայնաւորների հետ միանալով կազմում է երկբարբառներ. այսպէս

ա՛ի=այ. օր. կարդա-ի՛ցեմ—կարդայցեմ. Ասիա-ի—Ասիայ.

ո՛ի=ոյ. օր. դո՛-ին—դոյն. նո՛-ին—նոյն.

ի՛ա=եա օր. որդի-ակ—որդեակ. բարի-աւ—բարեաւ.

ի՛ո=ւո[1] օր. որդի-ոյ—որդւոյ. բարի-ոք—բարւոք[1]։

բ) Իսկ երբ ի ձայնաւորը ա, ո ձայնաւորների մօտ պատահի և շեշտ ունենայ՝ կպահպանուի, և այս դէպքում նրա և միւս ձայնաւորի մէջ կմտնէ ներդաշնակութեան ը կիսաձայնը. այսպէս.

ա՛ի=այի. օր. աղա-ի—աղայի. Երեմիա-ի—Երեմիայի.

ո՛ի=ոյի. օր. քո-ին—քոյին։

ԾԱՆՕԹ. Միավանկ բառերն այս վերջին օրէնքին չեն ենթարկվում. օր. մի-ոյ, մի-ովք։

գ) Երբ միմեանց մօտ գալիս են ե և ի՝ (եի) ե-ը փոխւում է է. օր. գործե-ի—գործեի—գործէի, սիրե-ի՝—սիրէի։

§ 27. Ձայնաւոր գրերը կարող են աճել, այսինքն կարճ ձայնաւորից երկար դառնալ, կամ պարզ ձայնաւորից երկբարբառ։ Աճումը տեղի է ունենում՝ երբ մի բաղաձայն զիր կորսվում է, որի պատճառով նորա մօտի ձայնաւորն երկա-

---

[1]) Այս (ւո) գրութիւնը առաջ կարդացվում էր՝ ինչպէս ֆրանսերէն uo։

բում է. օր. մայր բառը առաջ եղել է մատր [1]. տ-ն ընկնելով՝ ստացուել է մար—մայր. գործէ, գործէք. (առաջ եղել են *գործեատ, *գործեատք [2]) տ-ն ընկնելով՝ և ձայնաւորը երկարել դարձել է է. աղայ, աղայք. (*աղատ, աղատք=աղա՛, աղա՛ք=աղայ, աղայք). կանայք=կանանք։

§ 28. Բաղաձայն գրերի մէջ, հոլովելու և խոնարհելու ժամանակ, տեղի են ունենում հետևեալ փոփոխութիւնները.

ա) Երբ միմեանց մօտ գալիս են ն և ը գրերը՝ ն փոխվում է մ-ի (որովհետև ը-ն շրթնային տառ է՝ ուստի ն էլ շրթնային է դառնում). օր. նեղութեան-ը—նեղութեանը—նեղութեամբ. աղեղան-ը—աղեղամ՛ը։ Համեմատել ամ-ը՛ի՛ծ=ան-ը՛ի՛ծ, ճամբայ=ճանապարհ։

բ) Երբ միմեանց մօտ գալիս են ը և արմատական ն՝ ը գիրը սաստկանում դառնում է ռ. իսկ երբ այս ռ-ն ն-ից հեռանում է՝ նորից դառնում է ը. օր. լերին—լեառն. դրան—դուռն. այը—առն, արամբ (§ 28, ա). առնեմ—ար-արի։

գ) Երբ միմեանց մօտ գալիս են երկու ց, որոնք երկուքն էլ բառի բուն արմատին չեն պատկանում՝ առաջին ց փոխվում է ս. օր. գործեց-ցուք—գործեցցուք—գործեսցուք. (արմատ գործ), սիրեց-ցեն—սիրեսցեն (արմ. սիր)։

---

1) Համեմատել հին ռուսերէն ма́терь (матери)։

2) Համեմատել ռուսերէն дѣлаетъ, дѣлаете.

Բ. ՀՈԼՈՎՈՒՄ

Գլ. Ե. ՀՈԼՈՎՆԵՐ.

§ 29. Գոյական և ածական անուններն ու դերանունները խօսքի մէջ յարաբերութիւն ունին միմեանց հետ և բայի հետ և այլևայլ պաշտօններ են վարում. երբեմն նրանք ցոյց են տալիս, թէ ո՞վ է կատարում գործողութիւնը. օր. թագաւորն գայ. նա գայ. երբեմն ցոյց են տալիս, թէ ո՞րի վրայ է ընկնում գործողութիւնը. օր. տեսի զթագաւորն, սիրեմ զնա. երբեմն ցոյց են տալիս, թէ մի առարկայ ո՞րին է պատկանում. օր. աթոռ թագաւորի, ձեռք նորա. երբեմն ցոյց են տալիս, թէ գործողութիւնը ո՞րի օգնութեամբ կամ ձեռքով է կատարվում. օր. թագաւորաւ շինի աշխարհ. նովաւ կեանք էր, ևն։ Այս տարբեր նշանակութիւնները արտայայտելու համար գոյական և ածական անուններն ու դերանունները վերջից և սկզբից փոփոխութիւններ են կրում (թագաւոր—զթագաւոր, թագաւորի, թագաւորաւ. նա, զնա, նորա, նովաւ), որ կոչվում է հոլովում, իսկ փոփոխուած ձևերը կոչվում են հոլով։

§ 30. Հայերէն գրաբար լեզուն վեց հոլով ունի. 1) ուղղական, որ առարկայի անունն է և պատասխանում է ո՞վ, զի՞նչ հարցմունքին. (թագաւոր, մեծ, նա). 2) հայցական, որ ցոյց է տալիս, թէ ո՞ւմ վերայ է ընկնում գործողութիւնը, և պատասխանում է զո՞վ, զի՞նչ հարցմունքին. (զթագաւոր, զմեծ, զնա). 3) սեռական, որ ցոյց է տալիս, թէ որ առարկային է պատկանում բառը, և պատասխանում է որո՞յ հարցմունքին. (թագաւորի, մեծի, նորա). 4) տրական, որ ցոյց է տալիս, թէ ո՞ւմ համար է կատարվում գործողութիւնը, և պատասխանում է ո՞ւմ հարցմունքին. (թագաւորի, մեծի, նմա). 5) բացառական, որ ցոյց է տալիս, թէ ո՞ւմից է սկսվում, առաջ գալիս գործողութիւնը, և պատասխանում է յո՞ւմմէ, ուստի՞ հարցմունքին. (ի թագաւորէ, ի մեծէ, ի նմանէ). 6) գործիական, որ ցոյց է տալիս, թէ որի՞ ձեռքով կամ միջոցով է կատարվում գործողութիւնը, և պատասխանում է ի՞ւ, ի՞ւ ինչ հարցմունքին, (թագաւորաւ, մեծաւ, նոմա)։ Այս հոլովներից ուղղականը և հայցականը կոչվում են ուղիղ հոլովներ, իսկ միւսները կոչվում են թեք հոլովներ։

§ 31. Բառերը կարող են նշանակել նաև մի առարկայ կամ մէկից աւելի առարկայ. օր. որդի թագաւորի (մի թագաւորի մի որդի), և որդիք թագաւորաց (շատ թագաւորների շատ որդիներ). ձեռն (մի ձեռք) նորա, ձեռք (երկու

կամ աւելի ձեռք) նորա. նա ասէր. նորա ասէին։ Այս փոփոխութիւնը, որ առարկայի մի կամ շատ լինելն է ցոյց տալիս՝ կոչւում է թիւ։

§ 32. Գրաբար լեզուն ունի երկու թիւ. 1) եզակի, որ ցոյց է տալիս, թէ առարկան մի հատ է. (թագաւոր, ձեռն, նա), և 2) յոգնակի, որ ցոյց է տալիս թէ առարկան մէկից աւելի է. (թագաւորք, ձեռք, նորա)։

§ 33. Հոլովելու, այսինքն բառը հոլովով և թուով փոփոխելու ժամանակ՝ նկատելու է բուն բառը, արմատը, հոլովիչ ծայնաւորը, հոլովակերտ և յոգնականացուցիչ գրերը։

§ 34. Բուն կոչվում է բառի այն ձևը, որով մենք կոչում ենք առարկան. օր. բան, գործ, սիրտ, սուրբ։ Բունը բառի շեշտուած ձևն է։

§ 35. Արմատ կոչվում է բառի այն ձևը կամ այն մասը, որ բոլոր հոլովների մէջ, թէ եզակիում և թէ յոգնակիում, գտնվում է. օր. բան, բանի, բանիւ, ի բանէ, բանք, զբանս, բանից, բանիւք. գործ, գործոյ, գործով, ի գործոյ, գործք, գործոց, գործովք, սիրտ, սրտի, սրտիւ, ի սրտէ, սիրտք, սրտից, սրտիւք. սուրբ, սրբով, սուրբք, սրբոց, սրբովք։ Այս օրինակների մէջ բան, գործ, սրտ, սրբ ձևերը կոչվում են արմատ, որովհետև ամեն մի հոլովի մէջ ևս գտնվում են։— Սրանից երևում է, որ արմատը երբեմն նման է լինում բունին (ինչպէս բան, գործ), երբեմն բունից տարբեր (ինչպէս բուն՝

սիրտ, առմատ սրտ, բուն՝ սուրբ, արմատ սրբ)։ Արմատը բառի անշեշտ ձևն է։

§ 36. Բունից արմատը կազմելիս բառերն ենթարկվում են շեշտի օրէնքներին, որոնք բացատրուած են §§ 18—23 ի մէջ. այնպէս որ

շեշտուած բունից	ստացվում է	անշեշտ արմատ
անասո՛ւն, բազո՛ւմ	»	անասն, բազմ
գետի՛ն, թի՛ւ	»	գետն, թու (§ 18 և ծան. 1)
մարդասէ՛ր, կէ՛տ	»	մարդասիր, կիտ (19, 1)
Միքայէ՛լ, աղուէ՛ս	»	Միքայել աղուես (19, 2)
եղեամն, մատեամն	»	եղեմն, մատեն (20)
տարակոյս, բոյն	»	տարակուս, բուն (21)
նեղութիւն, արիւն	»	նեղութին, արին (22)
աշտեայ, քրիստոնեայ	»	աշտէ, քրիստոնէ (23)

§ 37. Այն բառերը, որոնք վերջին փակ վանկում ունին ա, ե, ո, ձայնաւորները՝ շեշտի ազդեցութեան չեն ենթարկվում (§ 17). ուստի նրանց բունը և արմատը նման են միմեանց. օր.

շեշտուած բուն	անշեշտ արմատ
քաղա՛ք, բա՛ն	քաղաք(ի), բան(ի)
ժողո՛վ, գո՛ծ	ժողով(ոյ), գործ(ոյ)
աբե՛թ, մե՛ծ	աբեթ(ի), մեծ(ի).

ԾԱՆ. Ե ձայնաւորի մի քանի սղութիւնների մասին տես § 17, ծան 2։

§ 38. Հոլովիչ կոչվում են այն ձայնաւոր գրերը, որոնք գրվում են բառի արմատի վրայ, թեք հոլովներ կազմելու ժամանակ. օր. սրտ-ի աղուես-ու, աղեղ-ա-ն ժողով-ո-յ ևն։ Հոլովիչ ձայնաւորներն են ա, ե, ի, ո, ու։

ԾԱՆ. 1. Երբ ա և ո հոլովիչները հոլովական բառի վերջում են պատահում՝ աճում դառնում են այ, ոյ։

ԾԱՆ. 2. Երկրորդ խառն հոլովումի մէջ (տես § 43) շատ անգամ եզակի սեռական տրական և բացառական հոլովներում ո (ոյ) հոլովիչի տեղ գործածվում է ոջ։

ԾԱՆ. 3. Ե հոլովիչը պատահում է միայն բաղաձայն հոլովումի մէջ. (տես § 41)։

§ 39. Հոլովակերտ կոչվում են այն ձայնաւոր և բաղաձայն գրերը, որոնք գրվում են բառի վերջը հոլովիչից յետոյ՝ որոշեալ հոլով կազմելու համար։ Հոլովակերտ գիր առնում են գործիականը և եզակի բացառականը, իսկ դերանունների մէջ՝ նաև սեռականն ու տրականը։ Բացառականի հոլովակերտ գիրն է է. Գործիականի հոլովակերտ գրերն են ւ, վ, ը, որոնցից ը գործ է ածվում բաղաձայնից յետոյ, վ գործ է ածվում ո ձայնաւորից յետոյ, իսկ ու միացած դէպքերում։ Դերանունների մէջ սեռականի հոլովակերտն է ը, տրականինը մ. (միայն եզակիում)։

ԾԱՆ. Ու հոլովիչն ունեցող բառերը գործիականում հոլովակերտ չեն առնում։

§ 40. Յոգնականացուցիչ գրերն են ք, ց, ս։ Ք գործ է ածվում ուղղականում և գործիա-

կանում, ց՝ սեռականում, տրականում և բացառականում, իսկ ա՝ հայցականում։

ԳԼ. Զ. ԱՆՈՒԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ.

§ 41. Գոյական և ածական անունները հոլովուելիս՝ հոլովիչ գիրը (§ 38) դնում են կամ արմատից յետոյ, կամ արմատի վերջին բաղաձայնից առաջ, օր. տիղմ (արմատ՝ տղմ)— տղմ-ի, գրաստ—գրաստ-ու ձևերում՝ ի և ու հոլովիչները դրուած են տղմ և գրաստ արմատների վերջը։ Իսկ աղեղն—աղեղ-ա-ն, կայսր—կայս-ե-ր ձևերում՝ ա և ե հոլովիչները դրուած են արմատի վերջին բաղաձայն ն և ր գրերից առաջ։ Առաջին տեսակ հոլովումը կոչվում է ձայնաւոր հոլովում, որովհետև բառը եզ. սեռականում վերջանում է ձայնաւոր հոլովիչով. իսկ երկրորդ տեսակը կոչվում է բաղաձայն հոլովում, որովհետև բառը վերջանում է արմատի բաղաձայն գրով։

ԾԱՆ. Բաղաձայն հոլովում ունին 1) ին վերջացած բառերը. օր. նեղութիւն, արիւն. 2) այն բառերը, որոնք վերջանում են ն, ր, ղ գրերով՝ նախընթաց բաղաձայնով. (օր. աղեղն, եղէգն. կայսր, ազգր. աստղ, կոճղ. 3) ուրիշ շատ բառեր, որոնք բունի սկզբնական ն կորցրել են, իսկ արմատում պահել են, օր. մանուկ —մանկ-ա-ն (բուն՝ մանուկ, փոխանակ * մանուկն, արմ. մանկն). գարուն—գարնան (բուն՝ * գարունն, արմ. գարնն)։ Համեմատել աշխարհաբարում եզ, ձուկ, դուռ

—եղան, ձկան դռան, եղներ, ձկներ, դռներ. (գրաբար՝ եղն, ձուկն, դուռն)։

§ 42. Եթէ բառը թէ եզակի և թէ յոգնակի բոլոր թեք հոլովներում գործ է ածում մի հոլովիչ՝ այսպիսի հոլովումը կոչվում է պարզ հոլովում. օր. գործ—գործոյ, գործով, գործոց, գործովք. աղեղն—աղեղան, յաղեղանէ, աղեղամբ, աղեղանց, աղեղամբք ևն։ Իսկ եթէ բառը հոլովուելիս գործ է ածում երկու հոլովիչ՝ այսպիսի հոլովումը կոչվում է խառն հոլովում. օր. քաղաք—քաղաքի, քաղաքաւ. գառն—գառին, գառանց։

§ 43. Երկու խառն հոլովում կայ. առաջինը գործ է ածում ի և ա հոլովիչները. երկրորդը՝ ո և ա հոլովիչները։ Սրանցից ի և ո հոլովիչները գործածվում են եզակի սեռական, տրական և բացառական հոլովներում, իսկ ա հոլովիչը գործածվում է եզակի գործիական և յոգնակի թեք հոլովներում։ Ուրեմն եթէ մի բառ յոգնակի թեք հոլովում ունի ա հոլովիչը՝ եզակի սեռականում նա կարող է ունենալ ա հոլովիչ՝ եթէ պարզ հոլովում ունի, և ի կամ ո հոլովիչ՝ եթէ խառն հոլովում ունի. օր. աղեղանց—եզակի սեռ. աղեղան. քաղաքաց—եզ. սեռ. քաղաքի. բարեաց—եզ. սեռ. բարւոյ։

Գլ. Է. ՀՈԼՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ.

§ 44. Եզակի ուղղականը բառի սկզբնական ձևն է (բուն), առանց որևէ յաւելուածի. օր. մարդ, սիրտ, աղեղն։

§ 45 Եզակի հայցականը նման է ուղղականին։ Եթէ բառը որոշուած է՝ սկզբից առնում է զ նախդիրը, օր. մարդ, սիրտ, աղեղն, կամ զմարդն զայն, զսիրտ իւր, զաղեղն իւր։

§ 46. Եզակի սեռականը և տրականը կազմվում են՝ արմատի վրայ աւելացնելով հոլովիչ ձայնաւորը. օր. բան-ի, մարդ-ոյ (§ 38, 1), աղեղ-ա-ն (§ 41)։

§ 47. Եզակի բացառականը կազմվում է հետևեալ կերպով.

Արմատի վերջը դրվում է հոլովիչը, նրանից յետոյ հոլովակերտ է, իսկ սկզբից ի նախդիր, որ փոխվում է յ՝ եթէ բառը սկսվում է ձայնաւորով։ Օր. բուն՝ սկիզբն, ազգր. արմատ՝ սկզբն, ազդր. հոլովիչով՝ սկզբան, ազդեր. հոլովակերտով՝ սկզբանէ, ազդերէ. նախդրով՝ ի սկզբանէ, յազդերէ։

ԾԱՆ. 1. Ի հոլովիչ ունեցող բառերը միշտ կորցնում են հոլովիչը. ու հոլովիչ ունեցող բառերը յաճախ կորցնում են հոլովիչը (երբ բառի վերջում կայ վ հընչիւն)։ Օր. բուն՝ բան, սիրտ. արմ. բառ, սրտ. բացառական՝ ի բառէ, ի սրտէ (առանց ի հոլովիչի). բուն և արմատ՝ զգեստ. բացառական ի զգեստ-ու-է (ու հոլովիչով). բուն և արմատ՝ ծով, նաւ. բացառական՝ ի ծով-է, ի նաւ-է (առանց ու հոլովիչի)։

ԾԱՆ. 2. Ձայնաւոր հոլովումի մէջ ա և ո հոլովիչ ունեցող բառերը է հոլովակերտ չեն ընդունում։ Օր. բուն՝ Հայկ, խորհուրդ. արմատ՝ Հայկ, խորհրդ. բացառական՝ ի Հայկայ, ի խորհրդոյ։ (Այ.ոյ-ի մասին տես § 38, ծան. 1)։

§ 48. Եզակի գործիականը կազմվում է՝ արմատի վրայ աւելացնելով հոլովիչը և հոլովակերտը (§ 39). այս դէպքում եթէ բաղաձայն հոլովումի վերջի արմատական բաղաձայնը ն է՝ փոխվում է մ (§ 28, ա). օր. բան-ի-լ. գետ-ո-վ, աղեղ-ա-մ-ք, (փոխանակ աղեղ-ա-ն-ք), նեղութեա-ա-մ-ք, (փոխանակ նեղութի-ա-ն-ք, § 26 դ)։

§ 49. Յոգնակի ուղղականը կազմվում է՝ բունի վրայ աւելացնելով ք. օր. բան-ք, սիրտ-ք արքայ-ք։

ԾԱՆ. Բաղաձայն հոլովումի մէջ այն բառերը, որոնք վերջանում են երկու կամ աւելի բաղաձայն գրերով՝ յոգնակի ուղղականում բունի վերջին բաղաձայնից առաջ աւելացնում են ներդաշնակութեան ձայնաւոր գիր։ Ներդաշնակութեան ձայնաւորը լինում է կամ հոլովիչը, կամ ու։ Օր. աստ-ե-ղք (փոխանակ աստղք), գառ-ի-նք (փոխանակ գառնք), կողմ-ա-նք (փոխանակ կողմնք) (ե. ի. ա՝ հոլովիչներն են). աղեղ-ու-նք (հոլովիչն է ա). մաս-ու-նք (հոլովիչներն են ի, ա)։

§ 50. Յոգնակի հայցականը կազմվում է յոգնակի ուղղականից՝ վերջի ք-ն փոխելով ս-ի. օր. բան-ս, սիրտ-ս, արքայ-ս, աղեղուն ս, աստեղ-ս։ Եթէ բառը որոշուած է՝ հայցականն ստանում է սկզբից զ նախդիրը (§ 45)։

§ 51. Յոգնակի սեռականը և տրականը կազմվում են՝ արմատի վրայ աւելացնելով հո-

լովիչը և յոգնականացուցիչը (§ 40). օր. բան-ի-ց, քաղաք-ա-ց, գործ-ո-ց, աղեղ-ա-ն-ց։

52. Յոգնակի բացառականը նման է յոգնակի սեռականին կամ տրականին, միայն սկզբից ստանում է ի կամ յ նախդիրը (§ 47). օր. ի բանից, ի քաղաքաց, ի սրտից, յաղեղանց։

§ 53. Յոգնակի գործիականը կազմվում է՝ արմատի վրայ աւելացնելով հոլովիչը, հոլովակերտը (§ 39) և յոգնականացուցիչը (§ 40). օր. բան-ի-ւ-ք, քաղաք-ա-ւ-ք, սրտ-ի-ւ-ք, աղեղ-ա-մ-ա-ք (§ 28, ա)։

ԾԱՆ. Յոգնակիում աւ ձայնը, ինչպէս և բոլոր փակ վանկերում, նոր գրութեան եղանակով գրվում է ο քաղաքօք, օր, օրհնել, (փոխանակ՝ քաղաքաւք, աւր, աւրհնել)։

§ 54. Կատարյալ դերանվան կազմությունը

	Հայերեն	Հոլանդերեն	Գերմաներեն	Անգլերեն	Ֆրանսերեն	Իտալերեն	Իսպաներեն	Պորտուգալերեն
	Հայերեն	Հոլանդերեն	Գերմաներեն	Անգլերեն	Ֆրանսերեն	Իտալերեն	Իսպաներեն	Պորտուգալերեն
Հ.	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր
Հ.	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր
Հ.	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր
Հ.	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր
Հ.	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր
Հ.	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր	մոլոր

ՀԱՆ. 1. Հայերենում կատարյալ դերանունը կազմվում է դրական աստիճանի ածականից (՝) ավելացնելով։ ՀԱՆ. 2. Հայերենում կատարյալ դերանունը կարող է նաև տալիս ածականի հետ գոյականից է դրանից գիտակցելու (՝) ավելացնելով։ ՀԱՆ. 3. Հայերենում կատարյալ դերանունը կազմվում է դրական աստիճանի ածականից (՝) ավելացնելով։

§ 55. Օրինակներ ձայնաւոր պարզ հոլովումի։

Ա. հոլովիչ.		Ո հոլովիչ.	
Բուն և Արմ՝. Տիտան.		Բուն՝ մարմին, Արմ՝. մարմն.	
Ո.	Տիտան	Տիտանք	մարմին մարմինք
Հ. (զ)	Տիտան	Տիտանս	(զ) մարմին մարմինս
Ս. Տ.	Տիտանայ	Տիտանաց	մարմնոյ մարմնոց
Բ.	ի Տիտանայ	Տիտանաց	ի մարմնոյ մարմնոց
Գ.	Տիտանաւ	Տիտանաւք.	մարմնով մարմնովք.

Ի հոլովիչ.		Ու հոլովիչ.	
Բուն՝ սիրտ, Արմ՝.		սրտ.	Բուն և Արմ՝. դաս.
Ո.	սիրտ	սիրտք	դաս դաս
Հ. (զ)	սիրտ	սիրտս	(զ) դաս դասս
Ս. Տ.	սրտի	սրտից	դասու դասուց
Բ.	ի սրտէ	սրտից	ի դասուէ, ծովէ, դասուց
Գ.	սրտիւ	սրտիւք.	դասու դասուք.

ԾԱՆ. 1. Ա հոլովիչով հոլովվում են միայն յատուկ անունները (ոչ բոլորը)։

ԾԱՆ. 2. Ո հոլովիչով հոլովվում են ի միջի այլոց և այն բառերը, որոնք վերջանում են ել, եալ, ին, ուն, ուրդ, ուած ածանցական մասնիկներով։ (Կան բացառութիւններ)։

ԾԱՆ. 3. Ի հոլովիչով հոլովվում են ի միջի այլոց և այն բառերը, որոնք վերջանում են իա, այ, է, ոյ, եան, տասան, գոյն, օն, ուտ, ստ, շտ։ (Կան բացառութիւններ)։ Իա վերջացած յատուկ անունները կարող են և այլ տեսակ հոլովուել. Ամասիայի, կամ Ամասիայ, կամ Ամասեայ. Ամասիայիւ, կամ Ամասեաւ։

ԾԱՆ. 4. Ու հոլովիչով ի միջի այլոց հոլովվում են և մի քանի բառեր, որոնք վերջանում են ր գրով և նախընթաց բաղաձայնով։ Սրանք ր գիրը կորցնում են

եզակի թեք հոլովներում, իսկ յոգնակիում (նաև եզակի գործիականում) փոխում են ն-ի և հոլովվում են բաղաձայն հոլովումով. օր. Ո. Հ. փոքր, Ս. Տ. փոքու, Բ. ի փոքուէ, Գ. փոքու և փոքումբ. յոգն. Ո. փոքունք. Հ. փոքունս. Ս. Տ. փոքունց, Բ. ի փոքունց, Գ. փոքումբք։

§ 56. Օրինակներ ձայնաւոր խառն հոլովումի։

	Ի-Ա. հոլովիչ.		Ո-Ա. հոլովիչ.	
	Բուն՝ վէմ, Արմ՝ վիմ.		Բուն և Արմ՝ բարի.	
Ո.	վէմ	վէմք	բարի	բարիք
Հ.	(զ) վէմ	վէմս	(զ)բարի	բարիս
Ս.Տ.	վիմի	վիմաց	բարւոյ	բարեաց
Բ.	ի վիմէ	վիմաց	ի բարւոյ	բարեաց
Գ.	վիմաւ	վիմաւք.	բարեաւ	բարեաւք.

ԾԱՆ. 1. Ի-ա խառն հոլովումով հոլովվում են ի միջի այլոց և այն բառերը, որոնք վերջանում են ան (բացի եան և տասան), ակ, եակ, իկ, ուկ, որդ, աւոր, եղ, եղէն, ոց, ող, ոտ, իչ, ուչ, ու։

ԾԱՆ. 2. Ո-ա ձայնաւոր խառն հոլովումով հոլովվում են այն բառերը, որոնք վերջանում են ի ձայնաւորով, բացի միավանկ և ոսկի, որդի, հոգի բառերից, որոնք հոլովվում են պարզ ո հոլովվիչով։ Այն բառերը, որոնք ոչ հոլովիչն ունին՝ (§ 38,2) բացառականը կազմում են է գրով. օր. տեղի, տեղւոչ, ի տեղւոչէ։

§ 57. Օրինակներ բաղաձայն պարզ հոլովումի։

	Ա. հոլովիչ.		Ե հոլովիչ.	
	Բուն և արմ՝ գեղմն.		բուն և արմ՝ կայսր.	
Ո.	գեղմ-ն	գեղմանք ազգեղունք	կայսր	կայսերք
Հ.	(զ)գեղմն	գեղմանս ազգեղունս	(զ)կայսր	կայսերս

Ս.Տ. գեղման գեղմանց կայսեր կայսերց
Բ. ի գեղմանէ գեղմանց ի կայսերէ կայսերց
Գ. գեղմամբ գեղմամբք կայսերբ կայսերբք։

Բուն սիւն, Արմ. սին

Ո. սիւն սիւնք
Հ. (զ)սիւն (զ)սիւնս
Ս.Տ. սեան սեանց
Բ. ի սենէ ի սեանց
Գ. սեամբ սեամբք

ԾԱՆ. 1. Ե հոլովիչ ունեցող բառերը եզ. գործ. և յոգնակի թեք հոլովները կազմում են նոյնպէս՝ կայսերաւ, կայսերաց, կայսերաւք, (ա կրկնակ հոլովիչով, նախկին ե հոլովիչն համարելով արմատական)։

ԾԱՆ. 2. Աւր բառը հոլովվում է բաղաձայն հոլովումով, ու հոլովիչով. (որպէս թէ լինէր աւր, § 42, ծան. 2)—Ո. Հ. աւր, Ս. Տ. աւուր. Բ. յաւրէ (§ 18, փոխանակ յաւուրէ), Գ. աւուրբ. յոգն. աւուրք, աւուրս, աւուրց, աւուրքք։ Աւ ձայնը բաղաձայնի առաջ պատահելիս՝ կարող է սղուել օ. աւր—օր, յաւրէ—յօրէ։

§ 58. Օրինակ բաղաձայն խառն հոլովումի։

Ի Ա. հոլովիչ.

Բուն և Արմատ—մասն.

Ո. մասն մասունք, (անձ/ինք)
Հ. (զ)մասն (զ)մասունս, (անձ/ինս)
Ս.Տ. մասին մասանց
Բ. ի մասնէ ի մասանց
Գ. մասամբ մասամբք։

ԾԱՆ. 1. Բացառականը՝ նմանութեամբ բաղաձայն ա հոլովումին՝ կարող է լինել և ա հոլովիչով—ի մասանէ, ի գառանէ։

ԾԱՆ. 2. Բաղաձայն և ն վերջացած բառերից խառն հոլովում ունին այն երկավանկ բառերը, որոնց առաջին (շեշտուած) վանկի ձայնաւորն է ա կամ ե. միւսներն ունին պարզ հոլովում, ա հոլովիչով։ Օր. գառ(ը)ն, (գառին, գառանց). բեռ(ը)ն (բեռին, բեռանց). բայց նուռ(ը)ն նռան, նռանց. հիմ(ը)ն—հիման, հիմանց. խոտորում(ը)ն—խոտորման, խոտորմանց. ատամ(ը)ն—ատամն, ատամանց ևն։ Բացառութիւն են կազմում ոտն, թոռն (ի-ա հոլովիչներով). ակն, երկն, սերմն, ջերմն, գեղմն (ա պարզ հոլովիչով)։

ԾԱՆ. 3. Բաղաձայն և ղ, բաղաձայն և ր վերջացած բառերը ունին պարզ հոլովում՝ ե հոլովիչով։ Օր. աստղ—աստեղ-ց. տարր—տարեր-ց։ Բացառութիւն է կազմում աւր (օր)—աւուր-ց։

ԳԼ. Ը. ԶԱՐՏՈՒՂԻ ՀՈԼՈՎՈՒՄ.

§ 59. Կան բառեր, որոնք վերոյիշեալ կանոններին համաձայն չեն հոլովվում, այլ բացառութիւններ են կազմում նրանցից։ Այս բառերն են՝ *այր, հայր, բոյր, կին, զիւղ* և նրանցից բարդուած կամ նրանց նման բառերը—*քեռայր, տէր (տի-այր). մայր, եղբայր. հօրաքոյր. տիկին. քաղաքագիւղ* և այլն։ Սրանց անկանոնութիւնը կայանում է նրանում, որ կամ երկու հոլովական արմատ ունին, կամ հոլովիչ ձայնաւոր չունին, կամ մասամբ հոլովվում են ձայնաւոր և մասամբ բաղաձայն հոլովումով։ Այսպիսի հոլովումը կոչվում է *զարտուղի*, (ուղիղ հոլովումից շեղուած)։

§ 60. Այր։

Ո.	այր [1])	արք
Հ.	(զ)այր	(զ)արս
Ս.Տ.	առն [2])	արանց
Բ.	յառնէ	յարանց
Գ.	արամբ	արամբք։

§ 61. Հայր։

Ո.	հայր [1])	հարք
Հ.	(զ) հայր	(զ) հարս
Ս.Տ.	հաւր	հարց
Բ.	ի հաւրէ	ի հարց
Գ.	հարբ, (հարամբ)	հարբք։

§ 62. Քոյր։

Ո.	քոյր [1])	քորք
Հ.	(զ) քոյր	(զ) քորս
Ս.Տ.	քեռ	քերց
Բ.	ի քեռէ	ի քերց
Գ.	քերբ	քերբք։

ԾԱՆ. Քոյր բառը ունի և ուրիշ, թէև ոչ այնչափ ընտիր հոլովում՝ բաղաձայն և հոլովիչով՝ քուր արմատից. Եզ. Ս. Տ. քուեր, Գ. քուերբ. յոգն. Ս. Տ. Բ. քուերց, Գ. քուերբք։

§ 63. Կին։

Ո.	կին	կանայք [1])
Հ.	(զ) կին	(զ) կանայս

---

[1]) Տես 27։

[2]) Տես 28 բ.։

Ս. Տ.	կնոջ [2])	կանանց
Բ.	ի կնոջէ	ի կանանց
Գ.	կնաւ, կանամբ	կանամբք։

§ 64. Դիւղ (գեաւղ, գեօղ, գեւղ)։

Ո.	գիւղ, գեաւղ, գեւղ	գիւղք, գեաւղք
Հ.	(զ) գիւղ, գեաւղ, գեւղ	գիւղս, գեաւղս
Ս. Տ.	գեղջ	գիւղից
Բ.	ի գեղջէ	ի գիւղից
Գ.	գեղիւ, գիւղիւ	գիւղիւք։

§ 65. Կան շատ բառեր, որոնք երկու տեսակ են հոլովվում և կոչվում են կրկնահոլով. սրանք գործածում են

ա) տարբեր հոլովիչներ. օր. թուղթ—թղթոյ, թղթով, և թղթի թղթիւ, մոգ—մոգու, մոգուց, և մոգի, մոգաց.

բ) տարբեր հոլովական արմատներ. օր. խորհուրդ—խորհրդոյ, խորհրդով և խորհրդեան, խորհրդեամբ. (բուն՝ խորհուրդ և *խորհրդիւն, արմատ՝ խորհրդ և խորհրդին). մահ—մահու, մահը, մահուց, և մահուան, մահուամբ, մահունք, մահուանց. (բուն՝ մահ և * մահուն)· քար—քարի, քարիւ, և քարինք—քարանց, քարամբք. (բուն՝ քար և * քարն—տ. 41, ծան.), տիւ — տուի, տուով, և տուընջեան, տուընջեամբ. (բուն՝ տիւ և * տուընջիւն, արմատ՝ տու և տուընջին)։

---

[2]) Տես 38, ծան. 2։

§ 66. Կրկնահոլովներից տարբերելու է նմանաձայն բառերը, այսինքն այն բառերը, որոնք տարբեր նշանակութիւն և տարբեր հոլովումներ ունին, բայց նրանց բուները գրաբարում պատահաբար նման են միմեանց [1]։

Այս բառերն են.

այր, այրի, այրիս—բարանձաւ և այր, առն, արամբ—տղամարդ

հայր, հայրի, հայրիս—կանանոցի վերակացու և հայր, հաւր, հարբ—հայր

մայր, մայրի մայրիս—մայրի ծառ և մայր, մաւր, մարբ—մայր

գայլ, գայլի, գայլիս—բերանակապ և գայլ, գայլոյ, գայլով—գայլ

կոյս, կուսի, կուսիս—կոյս և կոյս, կուսի, *կուսաւ, կուսաց—կողմ

սան, սանի, սանիս—կաթսայ և սան, սանու, սանուց—սան, սանիկ

փող, փողի, փողիս—կոկորդ և փող, փողոյ, փողով—դրամ և հնչելու փող

օդ, օդի, օդիս—ոտնաման և օդ, օդոյ, օդով—օդ

որթ, որթոյ որթով—խաղողի որթ և որթ, որթու, որթուց—հորթ

դի, դիով, դիոց, դիովք—դիակ և դիք, դիւց կամ դից, դիոք աստուածներ։

---

[1]) Հայերէն ամենահին լեզուում այս բառերից շատերը տարբեր պէտք է եղած լինին ձևով. այսպէս հաւ բառը գրաբարում նշանակում է 1) սկիզբ—մեծ հայր և 2) թոչուն—ընտանի հաւ և աղաղաղ. մինչդեռ գրաբարից առաջ այդ բառը երևի տարբեր վերջաւորութիւններ պիտի ունենար, ինչպէս տեսնում ենք

Գլ. Թ. ԴԵՐԱՆՈՒՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ.

§ 67. Դերանունական հոլովումը հետևեալ տարբերութիւններն ունի անուանական հոլովումից.

ա) Գործածում է եզակի սեռականում և տրականում հոլովակերտ գրեր։

բ) Բառը հոլովվում է մէջտեղից և ոչ վերջից։

գ) Բառը ունենում է մի քանի հոլովական արմատներ։

դ) Գործիական և բացառական հոլովներում ստանում է կրկնակ գործիականացուցիչ և կրկնակ յոգնականացուցիչներ։

ե) Հոլովիչ ձայնաւորը երբեմն գործածվում է և երբեմն ոչ (սղուելով)։

Այս հոլովումով հոլովվում են դերանունների մեծ մասը. իսկ փոքր մասը հոլովվում է անուանական հոլովումով, կամ դերանունական և անուանական խառն հոլովումներով։

§ 68. Եզակիում սեռականի հոլովակերտն է ը. տրականի հոլովակերտը՝ մ։ Բացառականը կազմվում է տրականից, աւելացնելով է, նէ, էն, նէն։ Յոգնակիում այս հոլովակերտ տար-

---

լատիներէնի մէջ, ուր ávus նշանակում է մեծ հայր, իսկ ávis նշանակում է թռչուն. իսկ հայերէնում us և is վերջաւորութիւններն ընկնելով՝ այդ երկու բառը միևնոյն ձևն են ստացել (աւ—հաւ)։

բերը չկան, և յոգնակին աւելի նման է անուանական հոլովումին։ Հայցական հոլովը, թէ եզակիում և թէ յոգնակիում, միշտ ունենում է զ որոշիչ նախդիրը. բայց երբ հայցական հոլովը գործ է ածվում ի, առ, ընդ, ըստ նախդիրներով՝ զ նախդիրը ձգում է (տ. § 125)։

§ 69. Անորոշ դերանունները ունին շնչաւոր առարկայի համար Ո արմատը, իսկ անշունչի համար Ի արմատը, որոնց վրայ աւելանալով այլ և այլ ածանցներ՝ կազմում են հետևեալ անորոշ դերանունները.

	շնչաւոր	անշունչ
	ո, ո-վ, ո-ր, ո-ՄԻ, ո-ք.	ի, ի-ր, ի-ՄԻ, *ի-ք, ինչ.

§70. Ո ևնրա երկարը ով հոլովվում են այսպէս.

Ո.	ո ով	ոյք, ովք
Հ.	զո, զով	զոյս
Ս.	ոյր	ոյց
Տ.	ում	
Բ.	յումէ, յումմէ	յոյց
Գ.	—	—

§ 71. Որ յարաբերականը հոլովվում է անուանական հոլովումով, ո հոլովիչով. միայն եզ. Տ. ունի որում, Բ. յորմէ (18)։

§ 72. Ումն, ոք հոլովվում են այսպէս.

Ո.	ո-մ-ն	ում-ա-ն-ք	ո-ք
Հ.	զումն	զում-ա-ն-ս	զոք
Ս.	ու-բու-մն	ում-ա-ն-ց	ու-բու-ք
	ո-բու-մն		
Տ.	ու-մե-մն		ու-մե-ք
Բ.	յու-մե-մն-է	յում-ա-ն-ց	յու-մե-ք-է
Գ.	ում-ա-մ-ք	ում-ա-մ-քք	—

Ցոգնակի չունի։

ԾԱՆ. Այս արմատներից մնացած կան և հին նախնական հոլովներ, որոնք գրաբարի մէջ գործածվում են ինչպէս մակբայ. Հ. ուր, Բ. ուստ, ուստի (արմատ ո), Հ. ուրեք, Բ. ուստեք, ուստեքէ (արմատ ոք)։

§ 73. Ի պակասաւոր հոլովում ունի. եզ. Ուղ-ի փոխարէն գործ է ածում Հայց.

Ո. Հ. զի, Ս. էր, Տ. հիմ, Բ. առ իմէ, Գ. իւ։ Ցոգնակի չունի։

§ 74. Իր գոյական անուան նշանակութիւն է ստացել (ինչ-որ բան, բան, ստացուածք) և հոլովվում է անուանական Ա. խառն հոլովումով (իրի, իրաց)։

§ 75. Իմն, իք.

Ո. Հ.	ի-մն	ի-ք
Ս.	*ի-բե-մն	ի-բի-ք
Տ.	ի-մե-մն	ի-մի-ք
Բ.	յի-մե-մն-է	յի-մե-ք-է
Գ.	—	ի-ւի-ք

Ցոգնակի չունին։

§ 76. Ինչ ունի միայն եզ. ուղղ. և հայց. ինչ, զինչ, յինչ։

§ 77. Էական (գոյական) դերանուններբ

ես, դու, ինքն, իր, հոլովվում են այսպէս.

Ո.	ես	մեք	դու	դուք
Հ.	զիս	զմեզ	զքեզ	զձեզ
Ս.	իմ	մեր	քո	ձեր
Տ.	ինձ	մեզ	քեզ	ձեզ
Բ.	յինէն	ի մէնջ	ի քէն	ի ձէնջ
Գ.	ինև	մեւք	քև	ձեւք

ԾԱՆ. Բացառականի նախկին ձևերը ինձէն, քեզէն, մեզէն, ձեզէն՝ գրաբարում գործ են ածվում ինչպէս մակբայներ։

§ 78. Ինքն ունի անուանական բաղաձայն հոլովում կամ հոլովիչով. Ս. Տ. ինքեան, Բ. յինքենէ (§ 20) Գ ինքեամբ, Ո. ինքեանք, Ս.Տ. ինքեանց, Բ. ինքեանց Գ. ինքեամբք։

§ 79. Իր պակասաւոր հոլովում ունի.

Ո. Հ.	—	իրեանք, զիրեանս
Ս. Տ.	իր	իրեանց
Բ.	յիրմէ	յիրեանց
Գ.	իրեաւ, իրեամբ	իրեամբք

§ 80. Ցուցական գոյական դերանուններ. ՍԱ, ԴԱ, ՆԱ եզ. գործ-ում երկու գոյականակերպ ունին և յոգն. գործ-ում՝ երկու յոգնականացուցիչ։

Երեքն էլ միատեսակ հոլովում ունին։

Ո.	ս-ա	ս-ոք-ա
Հ.	զս-ա	զս-ոս-ա
Ս.	ս-որ-ա	ս-ոց-ա
Տ.	ս-մա	ս-ոց-ա
Բ.	ի ս-մ-ա-նէ	ի ս-ոց-ա-նէ
Գ.	ս-ով-ա-ւ	ս-ոք-ա-ւ-ք

§ 81. Ցուցական ածական դերանուններն են 1) այս, այդ, այն, 2) *այսիկ *այդիկ, *այնիկ, 3) սոյն, դոյն, նոյն, որոնք կազմուած ս, դ, ն արմատներից և համապատասխան ածականական մասնիկներից։ Այսիկ, այդիկ, այնիկ ձևերը եզ. ուղղ. և հայց-ում գործածուած չկան գրաբարում, բայց կան աշխարհաբարի գաւառական բարբառներում—ասիկ, ասիկայ, էսիկ և այլն։ Սոյն, դոյն, նոյն կազմուած են սո-ին դո-ին, նո-ին ձևերից, ձայնաւորների սղումով (26, գ.)։

Մ. Եզ. Ո.	այս	Մ. *այս-իկ	Մսո-յն (սո-ին)
Հ.	դայս	*դայս-իկ	դսո-յն
Ս.	այս-ր	այս-որ-իկ	սո-ր-ին
Տ.	այս-մ	այս-մ-իկ	ս-մ-ին
Բ.	յայս-մ-անէ, յայսմ	—	—
Գ.	այս-ու	այս-ու-իկ	սո-վ-ին, սո-վ-իմ-ր
Յոգ. Ո.	այս-ք	այս-ոք-իկ	սո-ք-ին
Հ.	դայս-ս	դայս-ոս-իկ	դսո-ս-ին
Ս.Տ.	այս-ց	այս-ոց-իկ	սո-ց-ին
Բ.	յայս-ց	յայս-ոց-իկ	իսո-ց-ին, ի սո-ց-ուն-ց
Գ.	—	այս-ոք-իւք,	սո-ք-իմ-ք, սո-վ-իմ-ք։

ԾԱՆ. 1. Այսոքիւք՝ փոխանակ այսոքիւկ. (նմանութեամբ անուանական ի հոլովումի յոգն. գործիականին)։ Սոք-իմ-ք երկու յոգնականացուցիչ ունի,

սովիմբք՝ երկու գործիականացուցիչ (վ և բ) և կազմուել են անուանական բաղաձայն հոլովումով։

ԾԱՆ. 2. Այս դերանունների մի քանի նախնական հոլովական ձևերը գործածվում են գրաբարում ինչպէս մակբայ. օր. այսր, այդր, անդր՝ յո՛, ուր հարցմունքի պատասխան, հայցականի մտքով. աստ, այդր, անդ՝ ո՞ւր հարցմունքի պատասխան, նախդրիւ տրականի մտքով. աստի, այտի (փոխանակ ադտի—§ 27), անտի, աստուստ, այդուստ, անդուստ՝ ուստի՞ հարցմունքի պատասխան, բացառականի մտքով են։ Սրանք ունին և էն ին, մասնիկներով ածանցուած ձևեր, որոնք ցոյց են տալիս կրկնութիւն. օր. այսրէն, աստէն, աստստին են։

§ 82. Ստացական (ածական) դերանուններն են իմ՝, քո, մեր, ձեր, իւր, սորա, դորա, նորա, սոցա, դոցա, նոցա, որոնք կազմվում են համապատասխան էական դերանունների սեռականներից։ Սրանք հոլովվում են անուանական հոլովումով, ո հոլովիչով. միայն եզ. Տ. և Բ. հոլովներում ունին՝ ում և ամ դերանունական վերջաւորութիւնները—իմում, ձերում, ի քումմէ, ի ձերմէ։

	Եզ.			Յոգն.	
Ո.	իմ	իմ-ք	քո	քոյ-ք	
Հ.	զիմ	զիմ-ս	զքո	զքոյ-ս	
Ս.	իմ-ոյ	իմ-ոց	քոյ-ոյ, քոյ	քոյ-ոց, քոց	
Տ.	իմ-ում	»	քոյ-ում, քում	»	
Բ.	յիմ-մէ	յիմ-ոց	ի քում-մէ	ի քոյ-ոց	
Գ.	իմ-ով	իմ-ովք	քոյ-ով, քով	քոյ-ովք, քովք։	

ԾԱՆ. 1. Իմ-ի նման հոլովվում են մեր, ձեր, իր և միւսները. միայն սորա, սոցա... ձևերը եղ. բաց-ում անուանական հոլովման վերջաւորութիւն ունին—ի սորա-յ-ոյ, ի սոցա-յ-ոյ։ (Համեմատել § 26, ա)։

ԾԱՆ. 2. Նոյն արմատներից ածանցականներով կազմվում են և հետևեալ ձևերը—իմային, մերային, ձերային, իւրային (իմայնոյ, մերայնոյ). իմոյին, քոյին, մերոյին (անհոլով). իմովին, քովին, իւրովին, իւրովէ (մակբայ)։

Գ. ԽՈՆԱՐՀՈՒՄ

ԳԼ. Ժ. ԲԱՑԻ ՁԵՒԵՐ.

§ 83. Բայերն ունին երեք սեռ, 1) ներգործական, երբ ենթական ներգործական դեր է կատարում և գործողութիւնը նրանից անցնում է ուրիշ առարկայի վրայ. օր. հայր սիրէ զորդի. 2) կրաւորական, երբ ենթական կրաւորական դեր է կատարում, և գործողութիւնը նրա վրայ է անցնում ուրիշ առարկայից. օր. հայր սիրի յորդւոյ, և 3) չէզոքական, որի գործողութիւնը չէ փոխադրվում ենթակայից ուրիշի վրայ, և ոչ ուրիշից ենթակայի վրայ. օր. նստիմ, ելանեմ։

ԾԱՆ. Այն բայերը, որոնք միևնոյն ձևով ունին թէ ներգործականի և թէ կրաւորականի նշանակու-

թիւն՝ կոչվում են հասարակ. օր. Աբրահամ ծնաւ զԻսահակ (ներգործ), և Իսահակ ծնաւ յԱբրահամէ (կրաւ.)։

§ 84. Բայերն ունին չորս եղանակ. 1) սահմանական, երբ գործողութիւնն ըմբռնում ենք իբրև իրողութիւն. օր. նստիմ, գործեցի, ոչ նստայց, ոչ գործէին. 2) ստորադասական, երբ գործողութիւնն ըմբռնում ենք իբրև ենթադրութիւն կամ պայման, ցոյց տալով նրա կախումը ուրիշ գործողութիւնից. օր. եթէ ունիցիք հաւատս քան զհատն ժանանխոյ. յորժամ զայցես՝ յիշեա զիս. 3) հրամայական, երբ գործողութիւնն ըմբռնում ենք իբրև հրաման կամ յորդոր (մի բան անելու). օր. արի, կա՛ց, մանուկ դու. եկա՛յք առ իս. 4) արգելական, երբ գործողութիւնն ըմբռնում ենք իբրև սաստ (մի բան չանել), օր. մի՛ սպանաներ, մի՛ զողանար։

§ 85. Բայերն ունին երեք ժամանակ. 1) ներկայ, որ ցոյց է տալիս ներկայումս կատարուող (շարունակուող) գործողութիւն. օր. խօսիմ, գնամ. 2) անցեալ, որ ցոյց է տալիս, թէ գործողութիւնն առաջ է կատարուել. օր. խօսէի, գնայի, խօսեցայ, գնացեալ եմ. 3) ապառնի, որ ցոյց է տալիս, թէ գործողութիւնը յետոյ պիտի կատարուի. օր. խօսեցայց, գնացից, տեսանելոց եմ։

ԾԱՆ. 1. Անցեալ ժամանակը չորս տեսակ է լինում. 1) անկատար՝ երբ նշանակում է անցեալում շարունակուող գործողութիւն (խօսէի, տեսանէի) 2) կատարեալ՝ երբ նշանակում է վերջացած գործողութիւն

(խօսեցայ, տեսի). 3) յարակատար՝ երբ գործողութիւնը վերջացել է ուրիշ ներկայ գործողութիւնից առաջ (տեսեալ է, գնացեալ է). 4) գերակատար՝ երբ գործողութիւնը վերջացել է ուրիշ անցեալ գործողութիւնից առաջ (տեսեալ էր, գնացեալ էր)։

ԾԱՆ. 2. Ապառնին երկու տեսակ է. 1) պարզ, որ ցոյց է տալիս, թէ գործողութիւնը յետոյ պիտի կատարուի (տեսից, խօսեցայց—կտեսնեմ, կխօսիմ), և 2) բաղադրեալ, որ հաստատում և պնդում է, թէ գործողութիւնն անշուշտ պիտի կատարուի (տեսանելոց եմ, գալոց է—պիտի տեսնեմ, պիտի գայ)։

§ 86. Բայերն ունին չորս դերբայ. 1) անորոշ, որ գործողութեան անունն է (գործել, տեսանել), 2) ներկայ (գործող, տեսանող), 3) անցեալ (գործեալ, տեսեալ), և 4) ապառնի (գործելոց, տեսանելոց)։

§ 87. Բայերն ունին երկու թիւ—եզակի և յոգնակի, և երեք դէմք—առաջին, երկրորդ և երրորդ։

§ 88. Բայերի վերջաւորութեան փոփոխութիւնը, որով կազմվում են եղանակներ, ժամանակներ, թուեր և դէմքեր՝ կոչվում է խոնարհում։ Բայերը երկու տեսակ խոնարհում ունին—ներգործակերպ և կրաւորակերպ։

§. 89. Բայերի անորոշ դերբայի վերջաւորութիւնները կոչվում են լծորդներ, որոնք չորս են-ալ, ել, իլ, ուլ. իսկ բայերը նոյն վերջաւորութիւններով՝ կոչվում են լծորդութիւններ, որոնք նոյնպէս չորս տեսակ են լինում. առաջին լծորդութիւն—ալ, երկրորդ լծորդութիւն

—գործել, երրորդ լծորդութիւն—նստել, չորրորդ լծորդութիւն—թողել։

ԾԱՆ. Երրորդ լծորդութիւնը անորոշ և ապառնի դերբայներում և անցեալ անկատարում լծորդի ի ձայնաւորը փոխում է ե-ի. օր. նստել, նստելոց, նըստէի (= նստեի)։

§ 90. Եղանակների և ժամանակների նըկատմամբ բայերն ունին հետևեալ ձևերը.

Սահմանական եղանակի 1) ներկայ, 2) անցեալ անկատար, 3) անցեալ կատարեալ, 4) անցեալ յարակատար, 5) անցեալ գերակատար, 6) պարզ ապառնի, 7) բաղադրեալ ապառնի). Ստորադասական եղանակի 8) ներկայ), 9) անցեալ. 10) Հրամայական եղանակ (կատարեալ). 11) Ըրգելական եղանակ (ներկայ). Դերբայներ 12) անորոշ, 13) ներկայ, 14 անցեալ, 15) ապառնի։

ԾԱՆ. Այն բայերը, որոնք չունին այս ձևերից մի քանիսը՝ կոչվում են պակասաւոր։

§ 91. Սահմանականի ներկան, անցեալ անկատարը, կատարեալը, պարզ ապառնին, ստորադասականի ներկան, հրամայականը, արգելականը և դերբայները վերջաւորութիւններն աւելացնում են անմիջապէս բայի արմատի վրայ, և կոչվում են գլխաւոր ձևեր. իսկ սահմանականի յարակատարը, գերակատարը, բաղադրեալ ապառնին և ստորադասականի անցեալը կազմվում են դերբայներով և օժանդակ էական բայով (եմ՝), և կոչվում են երկրորդական ձևեր։

ԳԼ. ԺԱ. ԱՌԱՋԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՄԱՏ.

§ 92. Բոլոր գլխաւոր ձևերը կազմվում են երկու արմատից, որոնք կոչվում են Առաջին արմատ և Երկրորդ արմատ։ Առաջին արմատը գտնվում է՝ եթէ բայի սկզբնական ձևից, այսինքն անորոշ դերբայից, վերցնենք լծորդները. օր. աղալ—Ա. արմ. աղ. ընթանալ—Ա. արմ. ընթան. սիրել—Ա. արմ. սիր. հատանել—Ա. արմ. հատան, նստել—Ա. արմ. նստ. ծնանել—Ա. արմ. ծնան. հանդչել—Ա. արմ. հանդչ. թողուլ—Ա. արմ. թող. ընկենուլ—Ա. արմ. ընկեն։

§ 93. Առաջին արմատը լինում է պարզ, ինչպէս աղ, սիր, նստ, թող (բուն բայարմատներ). լինում է և բաղադրեալ, երբ բուն բայարմատից յետոյ աւելացած են բաղադրական մասնիկներ, ինչպէս ընթ-ան, հատ-ան, ծն-ան, հանդ-չ, ընկ-են։ Բաղադրական մասնիկներն են, ն, ան, են, չ, նչ. օր. առ-ն-ուլ, տես-ան-ել, ընկ-են-ուլ, թագ-չ-ել, երկ-նչ-ել։

ԾԱՆ. Կան երկու բայ ևս, որոնք ունին աչ, անչ բաղադրական մասնիկներ—ճան-աչ-ել, մեղ-անչ-ել։

§ 94. Առաջին արմատից կազմվում են սահմ. ներկան, անցեալ անկատարը, ստորադ. ներկան, արգելականը, անորոշ և ապառնի դերբայները։

§ 95. Երկրորդ արմատը լինում է պարզ՝ երբ բուն բայարմատի վրայ անմիջապէս դրվում են վերջաւորութիւնները. օր. տես-ի,

ծն-այ, թող-ի, ուս-այ. լինում է և բաղադրեալ՝ երբ բուն բայարմատի վրայ աւելացած են լինում աց, եց, ի բաղադրական մասնիկները. օր. աղ-աց-ի, խօս-եց-այ, երկ-ի-այ (երկեայ)։

§ 96. Երկրորդ արմատը կազմվում է Առաջին արմատից հետևեալ կերպով.

ա) Առաջին լծորդութեան բայերը երկրորդ արմատում միշտ բաղադրեալ են աց մասնիկով, իսկ ենալ վերջաւորուած բայերը՝ եց մասնիկով։ Այս մասնիկները աւելանում են բուն բայարմատի վրայ։ Օր. աղ-ալ, բ. արմ. աղաց. մեծ-ան-ալ, բ. արմ. մեծաց. մերձ-ենալ, բ. արմ. մերձեց։

բ) Երկրորդ և երրորդ լծորդութիւնների բայերը եթէ առաջին արմատում պարզ են՝ երկրորդ արմատում կլինին բաղադրեալ՝ եց մասնիկով. իսկ եթէ առաջին արմատում բաղադրեալ են՝ երկրորդ արմատում կլինին պարզ։ Օր. գր-ել, բ. արմ. գրեց. դատ-իմ, բ. արմ. դատեց. հատ-ան-ել, բ. արմ. հատ. մեռ-ան-իմ, բ. արմ. մեռ։

գ) Ձ, Նչ բաղադրիչ ունեցող բայերը երկրորդ արմատում դրանց տեղ առնում են ի, որ կոչվում է թոյլ բաղադրիչ։ Օր. մատ-չ-իմ, բ. արմ. մատի. երկ-նչ-իմ, բ. արմ. երկի։

դ) Չորրորդ լծորդութեան բայերը երկրորդ արմատում սովորաբար լինում են պարզ։ Օր. առ-ն-ուլ, բ. արմ. առ. թող-ուլ, բ. արմ. թող։

Բացառութիւն են կազմում 1) յե-ն-ուլ,

ընկ-են-ուլ, զգ-են-ուլ, խ-ն-ուլ բայերը, որոնց բ. արմատները կազմվում են ց զօրեղ բաղադրիչով—յեց, ընկեց, զգեց, խց, և 2) մածն-ուլ, ցածն-ուլ, ցասն-ուլ քաղցն-ուլ, զարթն-ուլ, պշն-ուլ բայերը, որոնց բ. արմատները կազմվում են ի թոյլ բաղադրիչով—մածի, ցածի, ցասի, քաղցի, զարթի, պշի։

§ 97. Երկրորդ արմատից կազմվում են անցեալ կատարեալը, պարզ ապառնին, հրամայականը, ներկայ եւ անցեալ դերբայները։

Գլ. ԺԲ. ՁԵՒԵՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ.

Ա) ԱՌԱՋԻՆ ԱՐՄԱՏ.

§ 98. Բ. արմատից կազմուած ձևերը (§ 97) ներգործակերպ և կրաւորակերպ խոնարհումների համար տարբեր վերջաւորութիւններ ունին. իսկ Ա. արմատից կազմուած ձևերը (94) չունին տարբեր վերջաւորութիւններ, բացի առաջին լծորդութեան բայերի ստորադասականից (§ 102. ծան.)։

§ 99. Առաջին արմատից կազմուած ձևերը վերջաւորութիւնները միացնում են արմատի հետ յօդով, որ իւրաքանչիւր բայի լծորդի ձայնաւորն է, ենթարկուած մի քանի փոփոխութիւնների. օր. գործ-ե-մ, աղ-ա-ս, ծնան-ի-մք, թող-ու-մք, գործ-է-ի (փոխանակ գործ-ե-ի, 26, գ), թող-ոյ-ը (փխնկ. թող-ուը, § 27) ևն։

§ 100. *Սահմ. ներկայի վերջաւորութիւններն են*

մ։ ս, —, մք, ք, ն. իսկ յօդով հանդերձ՝

Ա. լծ. ամ, աս, այ [1]*), ամք այք* [1]*) ան.*
Բ. լծ. եմ, ես, է [1]*), եմք, էք* [1]*), են.*
Գ. լծ. իմ, իս, ի, իմք, իք, ին.
Դ. լծ. ում, ուս, ու [2]*), ումք, ուք* [2]*) ուն։ Օր.*
Ա. լծ. աղ-ամ, -աս, -այ, -ամք, -այք, -ան.
Բ. լծ. գործ-եմ, -ես, -է, -եմք, -էք -են.
Գ. լծ. դատ-իմ, -իս, -ի, -իմք, -իք, -ին.
Դ. լծ. թող-ում, -ուս, -ու, -ումք, -ուք, -ուն։

§ 101. *Սահմ. անցեալ անկատարի վերջաւորութիւններն են*

ի, իր, ը, աք, իք ին. իսկ յօդով հանդերձ՝

Ա. լծ. այի [3]*), այիր, այը, այաք, այիք ային.*
Բ. Գ. լծ. էի [4]*), էիր, էր, էաք, էիք, էին.*
Դ. լծ. ուի, ուիր, ոյր [5]*), ուաք, ուիք, ուին։ Օր.*
Ա. լծ. աղ-այի, այիր, -այը, այաք, -այիք, -ային.
Բ. լծ. գործ-էի, -էիր, -էր, -էաք, -էիք, -էին.
Գ. լծ. դատ-էի, -էիր, -էր, -էաք, -էիք, -էին.
Դ. լծ. թող-ուի, -ուիր, -ոյր, -ուաք, -ուիք, -ուին։

---

1) *Տես § 27։*

2) *Հին ձեռագիրների մէջ պատահում են նախկին ձևերը ոյ, ոյք, որոնք առաջ են եկել ձայնի աճումից համաձայն § 27։*

3) *Տես § 26, բ։*

4) *Տես § 26, գ։*

5) *Տես §§ 21 և 24։*

ԾԱՆ. Հին ձեռագիրների մէջ սովորաբար գործ է ածվում Բ. լծորդութեան սկզբնական լծորդը ե, օր. գործեի, տեսանեիր, տեսանեիք են։

§ 102. Ստորադասականի ներկան ունի ից մասնիկը, որ Ա. արմատի յօդի հետ միանալով՝ շեշտի և ներդաշնակութեան օրէնքով զանազան փոփոխութիւններ է կրում։ Ստորադասականի վերջաւորութիւնները նոյնն են, ինչ որ սահմ. ներկայինը. միայն Ա. լծորդութիւնն ստանում է Բ. լծորդութեան յօդը

Ա. լծ. այց-եմ, այց-ես, այց-է, այց-եմք, այց-էք, այց-են.
Բ. լծ. ից-եմ, ից-ես, ից-է, ից-եմք, ից-էք. ից-են.
Գ. լծ. ից-իմ, ից-իս, ից-ի, ից-իմք, ից-իք, ից-ին.
Դ. լծ. ուց-ում, ուց-ուս, ուց-ու, ուց-ումք, ուց-ուք, ուց-ուն։ Օր.

Ա. լծ. աղ-այցեմ, -այցես, -այցէ, աղ-այցեմք, -այցէք, այցեն.
Բ. լծ. գործ-իցեմ, -իցես, -իցէ, գործ-իցեմք, -իցէք, -իցեն.
Գ. լծ. դատ-իցիմ, -իցիս, -իցի, դատ-իցիմք, -իցիք, -իցին.
Դ. լծ. թող-ուցում, -ուցուս, -ուցու, թող-ուցումք, -ուցուք, ուցուն։

ԾԱՆ. եթէ Ա. լծորդութեան բայերը կրաւորական նի նշանակութիւն ունին՝ ստորադասականի ներկայ-

ում առնում են Գ. լծ. վերջաւորութիւնները. օր. աղայց-իս, (աղացուիմ), մերկանայց-իս, (մերկացուիս)։ Տես § 98։

§ 103. Արգելականը (միայն երկրորդ դէմքում) կազմվում է սահմ. ներկայի Բ. դէմքից, եզակիում փոխելով ս գիրը ը-ի, իսկ յոգնակիում՝ անփոփոխ պահելով սահմ. ներկայի վերջաւորութիւնը. սկզբից ունի մի արգելական մակբայը. օր.

Ա. լծ. մի աղա-ը, մի աղայք.
Բ. լծ. մի գործե-ը, մի գործէք.
Գ. լծ. մի դատի-ը, մի դատիք.
Դ. լծ. մի թողու-ը, մի թողուք։

§ 104. Անորոշ դերբայը բայի սկզբնական ձևն է, կազմուած Ա. արմատից և լծորդներից. աղ-ալ, ընթ-ան-ալ, գործ-ել, հատ-ան-ել, դատ-ել, ուս-ան-ել, (փխ. դատ-իլ, ուս-ան-իլ), թող-ուլ, առ-ն-ուլ։ Անորոշ դերբայը հոլովվում է ո հոլովիչով, միայն եզակի։

§ 105. Ապառնի դերբայի վերջաւորութիւնն է լոց, որ միանում է Ա. արմատի հետ յոգով։ Դ. լծորդութեան յոգը սղվում է (հմմտ. § 18)։ Գ. լծորդութեան յոգը փոխվում է ե-ի (հմմտ. § 89, ծան.)։ Օր.

Ա. լծ. աղ-ա-լոց, Բ. լծ. գործ-ե-լոց.
Գ. լծ. դատ-ե-լոց, Դ. լծ. թող-լոց։

Բ) ԵՐԿՐՈՐԴ ԱՐՄԱՏ

§ 106. Երկրորդ արմատից կազմուած ձևերը (§ 97) բացի անցեալ դերբայից՝ տարբեր վերջաւորութիւններ ունին ներգործակերպ և կրաւորակերպ խոնարհումների համար. ինչպէս՝ ներգ. տես-ի, գործեց-ի, տես-ից, գործեց-ից. կրաւ. տես-այ, գործեց-այ, տես-այց, գործեց-այց։ Որոշելու համար, թէ ո՞ր խոնարհումը պէտք է ունենայ բայը Բ. արմատից կազմուած ձևերում՝ պէտք է ի նկատի ունենայ հետևեալ կանոնները.

ա) Ա. և Դ. լծորդութիւնների մէջ եթէ առաջին արմատը պարզ է՝ երկրորդ արմատը կարող է ունենալ թէ ներգործակերպ և թէ կրաւորակերպ խոնարհում՝ նայելով իմաստին. օր. ներգ. կարդ-ամ զնա, թող-ում զնա (կանչում եմ, թողնում եմ նրան). կարդացի զնա, թողի զնա (կանչեցի, թողի նրան). կրաւ. կարդ-ամ ի նմանէ, թողում ի նմանէ (կանչվում եմ, թողնվում եմ նրանից). կարդացայ, թողայ, ի նմանէ (կանչուեցի, թողնուեցի նրանից)։

բ) Ա. և Դ լծորդութիւնների մէջ եթէ Առաջին արմատը բաղադրեալ է՝ Բ. արմատը կունենայ կրաւորակերպ խոնարհում. օր. գող-ան-ամ—գող-աց-այ, զգջ-ան-ամ—զգջ-աց-այ։ Ջեռ-ն-ուլ—ջեռ-այ, զբօս-ն-ուլ—զբօս-այ։

Բացառութիւն են կազմում

[1]) Մերկանամ, լուանամ, բանամ, բառնամ, թանամ։

2) առ-ն-ում, թք-ն-ում, ընկ-ենն-ում, լ-ն-ում, խն-ում բայերը, որոնք իմաստին նայելով՝ կարող են ունենալ թէ ներգործակերպ և թէ կրաւորակերպ խոնարհում. օր. մերկացի, և մերկացայ, լուացի և լուացայ, բացի և բացայ, բարձի և բարձայ, թացի և թացայ, առի և առայ, թքի և թքայ, ընկեցի և ընկեցայ, լցի և լցայ, լքի, լքայ, խցի և խցայ։

գ. Բ. լծորդութեան բայերը՝ ներգործակերպ խոնարհում ունին. օր. ամաչ-եմ — ամաչեցի տեսանեմ — տես-ի։

դ) Գ. լծորդութեան բայերը՝ կրաւորակերպ խոնարհում ունին. օր. դատիմ — դատեց-այ, տեսան-իմ — տես-այ։

ե) Ի թոյլ բաղադրիչ ունեցող բայերը (96, գ. և դ, բացառութիւն 2) խառն խոնարհում ունին, ապառնիի եզ. 2, 3 և յոգն. բոլոր դէմքերը ներգործակերպ, իսկ Ցնացած ձևերը կրաւորակերպ. օր. երկ-նչ-իմ — երկ-ե-այ, ապ. 1 դէմք — երկ-ե-այց (կրաւ.), 2 դ. երկ-ի-ցես, -ցէ են (ներգ.)։

§ 107. Երկրորդ արմատից կազմուած ձևերը յոգ չունին, այլ վերջաւորութիւններն աւելացնում են ուղղակի արմատի վրայ. օր. գործեց-ի, դատեց-այ, տես-ի երկե-այ են։

§ 108. Անցեալ կատարեալի վերջաւորութիւններն են

Ներգործակերպ ի, եր, —, աբ, իք (կամ էք), ին. Կրաւորակերպ այ, աբ, աւ, աք, այք, ան. օր.

ներգ. տես-ի, -եր, տես, տես-աք, -իք, (էք), -ին.
գործեց-ի, -եր, գործեաց, գործեց-աք, -իք, -ին.
կր. տես -այ, -ար, -աւ, տես-աք, -այք, -ան.
գործեց-այ, -ար, -աւ, գործեց-աք, -այք, -ան։

ԾԱՆ. 1. Կատարեալի եզ. 3 դէմքը ենթարկվում է շեշտի ազդեցութեան և աճումի, այնպէս որ վերջի փակ վանկի ե գիրը փոխվում ա, (§ 20), ու=ոյ, ի=է, ը=ու և ի (տես § 24)· օր. փրկեց=փրկեաց, մատուց=մատոյց, անիծ=անէծ, գըտ=գիտ, մըտ=մուտ։

ԾԱՆ. 2. Անցեալ կատարեալը սկզբնական հայերէն լեզուում կազմուելիս է եղել և ե վերադիրով, որ գրաբարի մէջ մնացել է 1) ներգ. եզակի, 3 դէմքում. եթէ այդ ձևը միավանկ է. (այս ե-ը ձայնաւորի առաջ ներդաշնակութեան օրէնքով փոխուում է է-ի). օր. ե-տես, ե-հատ, է-առ է-ած. 2) բոլոր դէմքերում՝ եթէ բայի արմատը բաղկանում է միայն մի բաղաձայն տառից. օր. բայարմ. *կ. կատ—ե-կ-ի, ե-կ-իր, ե-կ-ն, ե-կ-աք, ե-կ-իք, ե-կ-ին. բայարմ. *Դ. (դ-ն-եմ). կատ. ե-դ-ի, ե-դ-եր, ե-դ, ե-դ-ա-ք, ե-դ-իք, ե-դ-ին. բայարմ. *Տ. (տ-ա-մ). կատ. ե-տ-ու, ե-տ-ուր, ե-տ, տու-աք, ե-տ-ուք, ե-տ-ուն։

ԾԱՆ. 3. Անցեալ կատարեալը կազմուելիս է եղել և բայարմատի կրկնութեամբ, որ ձևով գրաբարում մնացել է միայն մի բայ առնում (=ար-ն-եմ—28, բ) կատ. ար-ար-ի. (աշխարհաբարում առանց կրկնութեան—արի)։

§ 109. Պարզ ապառնիի վերջաւորութիւններն են,

Ներգործակերպ ից, ցես, ցէ, ցուք, ջիք ցեն.
Կրաւորակերպ այց, ցիս, ցի, ցուք, ջիք, ցին.

ԾԱՆ. Բաղադրեալ արմատի ց գիրը վերջաւորութեան ց և ջ տառերի առաջ փոխվում է ս, 28, գ). օր.

Ներգ. հատ-ից, -ցես, -ցէ, -հատ-ցուք, -ջիք, -ցեն.
գործեց-ից, գործես-ցես, -ցէ, -ցուք, -ջիք, -ցեն.
Կրաւ. հատ-այց, -ցիս, -ցի, հատ-ցուք, -ջիք, -ցին.
գործեց-այց, գործես-ցիս, -ցի, -ցուք, -ջիք, -ցին.
մատեայց (փոխ. մատի-այց) [1]), մատի-ցես, -ցէ,
-ցուք, -ջիք, -ցեն [2]).

§ 110. Հրամայականը ունի եզակի և յոգնակի միայն երկրորդ դէմքը և կազմվում է այսպէս.

Ներգործակերպ՝ (առանց ց-ի), էք.
Կրաւորակերպ՝ (կամ—ի՛ր,) այ՛ք կամ արո՛ւք

ԾԱՆ. 1. Եզակի 2 դէմքը վերջաւորութիւն չունի. ներգործակերպ խոնարհումի մէջ ձգում է նաև վերջի ց տառը՝ եթէ դա արմատական չէ. (երկու բայ՝ կալ-ում, առ-նում, ձգում են նաև արմատական լ և ր գրերը—կա՛, արա՛, փոխանակ կա՛լ,* արա՛ր։ Համեմատել գաւառական բե՛, կե՛, տո՛ւ են ձևերը, փոխանակ բեր, կեր, տուր)։ Միևնոյն ժամանակ շեշտի ազդեցութեամբ նոյն փոփոխութիւններին է ենթարկվում, ինչ որ տեսանք կատ. եզ. 3 դէմքում (§ 108, ծան. 1)

ԾԱՆ. 2. Ի թոյլ բաղադրիչը (§ 96, ա) այք և արուք վերջաւորութեան հետ միանալով՝ դառնում է եայք (§ 26, դ), երո՛ւք (§ 20). օր. փախի-այք=փախ-ե-այք, փախ-ի-արո՛ւք=փախ-ե-արո՛ւք=փախե-ր՛ուք։

ԾԱՆ. 3. Կրաւորակերպ խոնարհումի մէջ շեշտուած երկրորդ արմատը իբրև հրամայական գործ են ածում ց մասնիկով բաղադրուած Գ. լծորդութեան բայերը. իսկ իր վերջաւորութիւնը գործ են ածում

---

[1]) Տես § 26, ա։

[2]) Տես § 106, ե։

անխտիր բոլոր բայերը՝ որոնք կրաւորակերպ խոնարհում ունին։ Օր.

Ներգ.	տես,	տես-էք.
(Բ. արմ. լուծ)	լոյծ,	լուծ-էք.
(Բ. արմ. գործեց)	գործեա,	գործեց-էք.
Կրաւ.	տես-իր,	տես-այք, տեսարուք
	փախ-իր,	փախե-այք, փախե-բուք.
	գործեաց կամ գործեց-իր,	
		գործեց-այք, -արուք։

ԾԱՆ. 4. Հրամայականն ունի մի ուրիշ ձև ևս, որ յորդորական նշանակութիւն ունի. սա կազմվում է բայի ապառնի յոգն. 2 դէմքից, վերջին ք գիրը եզակիում փոխելով ր-ի, իսկ յոգնակիում անփոփոխ պահելով. օր.

Ներգ. և Կրաւ.	տեսջիր,	տեսջիք.
	գործեսջիր,	գործեսջիք.

§ 111. Ներկայ դերբայի վերջաւորութիւնն է ող կամ օղ, որ գործածվում է միայն ներգործական և չէզոքական բայերի մէջ։ Կրաւորական սեռը ներկայ դերբայ չունի։ Բ. լծորդութեան մէջ, ինչպէս և Գ. լծորդութեան պատկանող հասարակ բայերում, ներկայ դերբայը կարող է կազմուել թէ Ա և թէ Բ արմատներից. օր. աղաց-ող, տես-ան-ող (Ա. արմ.) կամ տես-ող (Բ. արմ.), ծն-ան-ող (Ա. արմ.), ծն-ող (Բ. արմ.), առ-ող, ընկեց-ող։

ԾԱՆ. Ներկայ դերբայի նախկին վերջաւորութիւնները, ան, օն, գրաբարում գործածվում են միայն մի քանի բառերում՝ իբրև ածանցական մասնիկներ— ջնջ-ան, փակ-ան, դալ-ան, կենդ-ան զգ-օն, գործ-օն։ (Համեմատել աշխարհաբարում կծ-ան, հաջ-ան, խածան, վազ-ան և այլն)։

§ 112. Անցեալ դերբայը երկու խոնարհումների համար էլ միևնոյն վերջաւորութիւնն ունի—եալ։ Բ. և Գ. լծորդութեան մէջ ևս բաղադրական մասնիկը յաճախ դուրս է ընկնում անցեալ դերբայում։ Ուրեմն այս դերբայը պատկանում է անխտիր բոլոր սեռերին. այնպէս որ տես-եալ նշանակում է թէ տեսել, տեսած, և թէ տեսնուել, տեսնուած։ Օր. ազաց-եալ, սիր-եալ կամ սիրեց-եալ, տես-եալ, դատ-եալ կամ դատեց-եալ, թող-եալ, ընկեց-եալ։

ԾԱՆ. Թոյլ բաղադրեալ արմատները (§ 96, գ. և դ. բացառ. 2), բացի քաղցնուլ բայից. սեփական անցեալ դերբայ չունին, այլ կազմում են իրանց անցողական ձևերի Բ. արմատներից (§ 116). օր. մարտուց-եալ, թաք-ուց-եալ, պշ-ուց-եալ, զարթ-ուց-եալ։

Գլ. ԺԳ. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՁԵՒԵՐ.

§ 113. Յարակատար, զերակատար և ստորադասականի անցեալ ձևերը կազմվում են բայի անցեալ դերբայից, իսկ բաղադրեալ ապառնին կազմվում է ապառնի դերբայից—էական բայի օժանդակութեամբ. այսպէս.

ա) յարակատարը՝ անցեալ դերբայից և էական բայի սահմ. ներկայից. օր. տեսեալ, խօսեցեալ եմ, ես, է, եմք, էք, են։

բ) զերակատարը՝ անցեալ դերբայից և էական բայի անցեալ անկատարից. օր. տեսեալ, խօսեցեալ էի, էիր, էր, էաք, էիք, էին։

գ) *ստորադասականի անցեալը՝ անցեալ դերբայից և էական բայի ստորադաս. ապառնիից. օր. տեսեալ, խօսեցեալ իցեմ, իցես, իցէ, իցեմք, իցէք, իցեն։*

դ) *բաղադրեալ ապառնին՝ ապառնի դերբայից և էական բայի սահմ. ներկայից. օր. տեսանելոց, խօսելոց եմ, ես, է, եմք, էք, են։*

§ *114. Որովհետև անցեալ դերբայը թէ ներգործականի և թէ կրաւորականի իմաստ ունի (§ 106, 112), ուստի նրանով կազմուած երկրորդական ձևերն էլ երկու սեռի նշանակութիւն ունին (տեսեալ է=տեսել է, տեսնուել է)։ Բայց գործածութեան մէջ բայի սեռը որոշվում է խոնարհումի տարբեր եղանակներով.*

ա) Եթէ բայը ներգործականի իմաստ ունի՝ էական բայը միշտ դրվում է եզ. 3 դէմքում բոլոր թուերի և դէմքերի համար, իսկ ենթական դրվում է սեռական հոլովով. օր. տեսեալ է իմ, տեսեալ է մեր, տեսեալ է նոցա, տեսեալ էր աշակերտաց, գործեալ իցէ մանկանց. (ես տեսել եմ, մենք տեսել ենք, նրանք տեսել են, աշակերտները տեսել էին, մանուկները գործած լինին)։

բ) Եթէ բայը կրաւորականի կամ չէզոքականի իմաստ ունի՝ էական բայը խոնարհվում է բոլոր դէմքերով ու թուերով, և ենթական դրվում է ուղղական հոլովով. օր. տեսեալ եմ ես, տեսեալ եմք մեք, տեսեալ են նորա, գնացեալ էին աշակերտքն յարուցեալ իցէ որ ի մեռելոց. (տեսնուած եմ ես, տեսնուած ենք մենք, տես-

նուած են նրանք, աշակերտները գնացել էին, որ մին մեռած տեղից վեր կացած լինի)։

ԾԱՆ. Է իմ, էր նորա ձևերը նշանակում են՝ ես ունիմ, նա ունէր, և իմ, նորա սեռական հոլովները էական բայի խնդիրներն են, այնպէս որ տեսեալ է իմ իսկապէս նշանակում է՝ ես ունիմ տեսած, և իմ սեռական հոլովը իսկապէս ոչ թէ ենթակայ է տեսեալ էբային, այլ խնդիր էական բային։

ԳԼ. ԺԴ. ԱՆՑՈՂԱԿԱՆ ԲԱՅԵՐ.

§ 115. Զէզոքական բայերը և շատ ներգործական բայեր ունին անցողական ձև, որ ցոյց է տալիս, թէ բայի գործողութիւնը ինքը ենթական չէ կատարում, այլ ուրիշին է կատարել տալիս. օր. նստ-իմ—նստուցանեմ, (նստեցնում եմ), զգենում—զգեցուցանեմ (հագցնում եմ)։ Նստիմ, զգենում՝ կոչվում են նախատիպ բայեր, իսկ նստուցանեմ, զգեցուցանեմ՝ անցողական բայեր։

§ 116. Անցողական ձևը կազմվում է՝ նախատիպ բայի երկրորդ արմատի վրայ աւելացնելով ուց ածանցական մասնիկը (շեշտի տակ՝ ոյց § 21 և 24), որից յետոյ դրվում է ան բաղադրական մասնիկը և Բ. լծորդութեան վերջաւորութիւնը. օր.

գն-ալ, Բ. արմ. գնաց. անցողական՝ գնացուց-ան-ել.

մեծ-ան-ալ, Բ. արմ. մեծաց. ան-ցող. մեծացուց-ան-ել.

հնչ-ել, Բ. արմ. հնչեց. ան-ցող. հնչեցուց-ան-ել. զարկ-ան-ել, Բ. արմ. զարկ. » զարկ-ուց-ան-ել. ապր-իմ, Բ. արմ. ապրեց. » ապրեց-ուց-ան-ել. բուս-ան-իմ, Բ. արմ. բուս. » բուս-ուց-ան-ել. հեղձ-ն-ուլ, Բ. արմ. հեղձ. » հեղձ-ուց-ան-ել. լն-ուլ, Բ. արմ. լց. » լց-ուց-ան-ել։

ԾԱՆ. 1. Թոյլ բաղադրեալ արմատները (§ 96, գ, դ) անցողական ձևը կազմելիս՝ դուրս են ձգում ի բաղադրիչը. օր. թագ-չ-իմ, Բ. արմ. թագ-ի, անցող. թագ-ուց-ան-ել. ցաս-ն-ուլ, Բ. արմ. ցաս-ի, անցող. ցաս-ուց-ան-ել։

ԾԱՆ. 2. Կայ անցողականի բաղադրեալ ձև էլ, որ կազմվում է նախատիպ բայի անորոշ դերբայից և տալ բայից, որը միայն խոնարհվում է. օր. տամ, ետու ըմպել, տայ, տացէ խօսել (խմցնում եմ, խմցրի, խօսեցնում է, կխօսեցնէ)։

Բացառութիւն։ Մի քանի բայեր անցողականի ուց մասնիկի ց գիրը փոխում են ս և զ գրերի. օր. կոր-ուս-ան-ել, փլ-ուզ-ան-ել, ընկլ-ուզ-ան-ել, ընդել-ուզ-ան-ել (փոխանակ կոր-ուց-անել, փլ-ուց-անել, ընկլ-ուց-ան-ել, ընդել-ուց-անել՝ կորնչիմ, փլչիմ, ընկլնում, ընդելանիմ նախատիպ բայերից)։ Մտանել բայը անկանոն ձևով կազմում է անցողականը—մուծանել (փոխանակ մտուցանել)։

§ 117. Բոլոր անցողական բայերը երկրորդ լծորդութիւն ունին, ներգործական սեռի են և ունին ներգործակերպ խոնարհում՝ ան բաղադրական մասնիկով Ա. արմատում։ Նրանց եզակի հրամայականում ուց մասնիկը, շեշտի տակ դառնալով ոյց՝ վերջին ց'ն կորցնում է իբրև ոչ արմատական (§ 110, ծան. 1), և յ'ն կորցնում է

սուր շեշտի պատճառով։ Օր. թագուցանեմ, Բ. արմ. թագուց, շեշտի տակ՝ թագոյց, հրամայական՝ թագո։ Նոյնպէս և կորո, փլո, ընկլո, ընդելո։ Բայց մոյծ։

ԳԼ. ԺԶ. ՁԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐ.

§ 119. Մի քանի բայեր երկրորդ արմատը կազմելիս շեղվում են ընդհանուր կանոններից, որոնք բացատրուած են 96 և յաջորդ յօդուածներում, և նոյն-իսկ երկրորդ արմատից կազմուած ձևերում տարբերութիւններ ունին սովորական եղանակից. այս տեսակ բայերը կոչվում են *զարտուղի*։ Սրանցից գլխաւորներն են.

ա) աս-եմ, գիտ-եմ, կար-եմ, մարթ-եմ, Բ. արմ. աս-աց, գիտ-աց, կաբ-աց, մարթ-աց։ Գիտեմ, հրմ. գիտա և գիտեա։

Լս-եմ, Բ. արմ. Լու. կտր. լուայ, -ար և այլն. ապ. լուայց, լուի-ցես, -ցէ, -ցուք, -ջիք, -ցեն, հրմ. լուր, լուարուք։

Ճան-աչ-եմ (փոխանակ՝ ծան-աչ-եմ). Բ. արմ. ծան-ի։

Ցառնեմ (=յ+ար+ն+եմ). Բ. արմ. յաբ-ի. հրմ. արի, արիք։

Առ-նեմ (=ար+ն+եմ). Բ. արմ. արար (տես § 108, ծան. 3). կտր. արարի են. ապ. արար-ից, արաս-ցես, -ցէ են. հրմ. արա, արարէք։

Լի-ն-իմ. Բ. արմ. Լի. կտր. չունի. ապ.

լի-ցիմ, -ցիս, -ցի, -ցուք, -ՀՀիք, -ցին. հրմ. լեր, լերուք. անց. դերբ. լիեալ, լեալ։

Տա-Ն-իմ, Բ. արմ. Տար. կտր. տարայ ևն։ Հրմ. տար, տարայք։

Ա՛ծ-եմ, Նստ իմ, Բեր-եմ, Համբեր-եմ, Հան-եմ, Հեղուս-եմ. Բ. արմ. պարզ — Ա՛ծ, Նստ, Բեր, Համբեր, Հան, Հեղուս։ Նստիմ. հրմ. Նիստ, նստայք կամ Նստարուք։

Երթ-ամ. կտրլ. չունի. ապ. երթ-այց, երթի-ցես, -ցէ, -ցուք և այլն. հրմ. երթ, երթայք. անց. դերբ. երթեալ։

Բ. արմ. Կեր. կտր. կեր-այ, կեր-աբ և այլն. ապ. կերայց, կերի-ցես, -ցէ ևն. հրմ. կեր. կերայք, կերէք։

Բ. արմ. Եղ. կտր. եղէ, եղեր, եղեւ, եղաք, եղէք, եղեն. ապ. եղէց, եղի-ցիս, -ցի, -ցին, նոյնպէս և եղի-ցես, -ցէ, -ցեն. հրմ. եր, երուք։

Ա. արմ. Գում. ստորադ. գու-ց-եմ, -ցես, -ցէ, -ցեմք, -ցէք, -ցեն։

բ) Մի բաղաձայն գրից կազմուած արմատները (տես § 108, ծան. 2, բ)։

Գ-ալ. Բ. արմ. ԵԿ. կտր. եկի, եկիր, եկն, եկաք, եկիք, եկին. ապ. եկ-ից, եկ-ցես, -ցէ և այլն. հրմ. եկ, եկայք։

Տ-ալ. Բ. արմ. ԵՏ, ՏՈՒ. կտր. ետու, ետուր, ետ, տուաք, ետուք, ետուն. ապ. տաց, տա-ցես, -ցէ ևն. հրմ. տուր, տուք։ (Կրաւ. տուիմ, անց. անկ. տուեալ լինէի, ստոր. տայ-

ցիմ, կտր. տուայ, ապ. տացիմ, հրմ. տուեալ լեր)։
Դ-ն-ել. Բ. արմ. ԵԴ, ԴԻ. կտր. եդի եդեր, եդ ևն, ապ. եդից, դի-ցես, -ցէ ևն. հրմ. դիր, դիք։

ԴԼ. ԺԷ. ՊԱԿԱՍԱՒՈՐ ԲԱՅԵՐ.

§ 120. Պակասաւոր բայերը (§ 90, ծան.) չեն ունենում կամ առաջին արմատը, կամ երկրորդ արմատը, կամ թէպէտ երկու արմատներն ևս ունին, բայց նրանցից կազմուած որևէ ձև գործածական չէ։ Պակասաւոր բայերի պակասորդ ձևերի փոխարէն գործածվում են ուրիշ, նման նշանակութեամբ բայերի համապատասխան ձևերը։

§ 121. Առաջին արմատ չունին
Կեր-այ, Ա. արմ. կազմում է ուտ-ել բայից.
Աբր-ի, » » ըմպ-ել »

§ 122. Երկրորդ արմատ չունին
Ուն-իմ, Բ. արմ. կազմում է կալ-այ բայից.
հրմ. կալ, կալայք.
Ընդուն-իմ, » » ընկալ-այ»
» հրմ. ընկալ, ընկալայք.
Ուտ-եմ, » » կեր-այ բայից
Հարկանեմ » » հար-ուտ »
Եմ, » » եղ-է »
Գում, որ երկրորդ արմատ չէ առնում ուրիշ բայից։

§ 123. Մի որոշ ձև չունին

Լի-ն-իմ. չունի անց կատ. և գործածում է եղ-ան-իմ բայից—եղէ, եղեր են։

Երթ-ամ. չունի անց. կատ. և գործածում է չոգ-այ. ապ. երթայց, երթի-ցեա են, հրմ. երթ և չոգ, երթայք և չոգայք։

Դ. ՆԱԽԴԻՐՆԵՐ

Գլ. ԺԸ.

§ 124. Նախդիր կոչվում են զ, ի (յ), ց, առ, ընդ, ըստ մասնիկները, որոնք առանձին առնուած՝ նշանակութիւն չունին, բայց հոլովուող բառերի առաջ դրուելով՝ տալիս են նրանց այլևայլ նշանակութիւններ, որոշելով նրանց այլևայլ հանգամանքները, ինչպէս տեղը, պատճառը, ժամանակը և այլն։ Այս մասնիկներից ի, առ, ընդ, ըստ գրվում են առանձին, իսկ յ, ց և զ գրվում են բառերի հետ միասին։

Այս և ուրիշ մասնիկներ նախկին հայերէն լեզուում միանալիս են եղել բառերի արմատների հետ՝ նոր նշանակութիւններ տալով նրանց, և այնքան սերտ են միացել, որ այժմ դժուարութեամբ են որոշվում արմատներից. օր. յ-առնեմ, յ-ամեմ, յ-աւելում, յ-ոյժ. զ-արթնուլ, զ-արկանել, զ-առանցել, զ-գենուլ (զ-գեաստ), զգոյշ. առ-ոգանել, առ-անձին, առ-աւել, զ-առ-

անցեմ, առ-ողջ. ց-այդ, ց-երեկ. ընդ-ունիմ, ըն-կալնում, ըն-կլնում, ըմ-պեմ. ն-ստիմ, ն-շոյլ ն-եցուկ, ն-այիմ ևն։

§ 125. Այս նախդիրները հոլովական բառերի սկիզբը դրուելիս՝ եթէ հոլովական բառն ունի որոշեալ հայցականի կամ բացառականի նախդիրները զ, ի՝ այս վերջինները դուրս կձգուին. օր. հայց. զնա, զնոսա, զառնս. նախդրով՝ առ նա, առ նոսա, ի տունս. բաց. յահեկէ, ի նմանէ, ի Բեղայ. նախդրով՝ ընդ ահեկէ, ըստ նմանէ, զԲեղայ։

ԾԱՆ. Միայն առ նախդիրը բացառականի հետ գործածուելիս՝ բացառականը պահում է իւր ի նախդիրը. օր. առ ի նմանէ, առ ի մէնջ։

Ա. Զ ՆԱԽԴԻՐ.

§ 126. Զ նախդիրը բացի որոշեալ հայցական կազմելուց՝ գործածվում է նաև

ա) Սեռական հոլովի հետ՝ զարկանել բայի մօտ, և ցոյց է տալիս այն առարկան, որի վրայ կամ որով զարկվում է. օր. հարկանել զքարի, զգետնի. հարկանիլ զամօթի, զդողանի, զդիմի։

բ) Բացառականի հետ և նշանակում է

1) (Առարկայի) վրայ, մասին. օր. տրտնջել զումեքէ. խօսել զտեառնէ, յիշել զհարց, վկայել զեղբօրէ։

2) Վրայից, մակերեւոյթից. օր. կախել գփայտէ, գծառոյ. կապել գորմոյ։

3) Բացառականի նշանակութեամբ. օր. ունել (բռնել) գձեռանէ, գհանդերձից. գոհանալ գԱստուծոյ. կախել գեղջերաց, գհերաց։

գ) Գործիականի հետ և նշանակում է

1) Մօտերը, շուրջը. օր. նստել գքաղաքաւ, գնալ գեղերբ, գալ գկէս գիշերաւ. գմտաւ ածել։

2) Վրան. օր. ծիծաղել գարամբ, արկանել գանձամբ, այր գարամբ ելանել։

3) Բացառականի իմաստով՝ անցանել բայի մօտ. օր. անցանել գամենեքումբք. անցանել գպատուիրանաւ, գանցանել գբանիւ։

Բ. Ի (Յ) ՆԱԽԴԻՐ.

§ 127. Ի (յ) նախդիրը բացի բացառական հոլով կազմելուց՝ գործածվում է նաև

ա) Հայցականի հետ և նշանակում է

1) Ուղղութիւն դէպի. օր. երթալ ի քաղաք, մտանել ի տուն, հայել յերկինս, դիմել ի Հայս։

2) Մէկի փոխանակ, տեղ. օր. լինել ի հայր, լինել յորդիս. ասել ի խրատ, համարել ի մարդ, ունել ի ծառայս։

3) Գործիականի իմաստով. օր. երդնուլ յԱստուած, մաշել ի սուր և ի հուր, յդել ի ձեռն ուրուք. ի պատճառս ձեր։

4) Անորոշ դերբայի հետ՝ ժամանակ. օր.

ի գալ գարնան, յելանելն ընդ առաջ, ի խօսելն ընդ միմեանս։

5) Անորոշ դերբայի հետ՝ Նպատակ. օր. եկեալ եմ ի լսել, ժողովեցան ի դատել, ամբարձ զձեռն ի սպանանել։

բ) Ցրականի հետ և նշանակում է

1) Մէջ. օր. նստել ի տան, ի քաղաքի, թաղել յերկրի, կալ ի բանի։

2) Վրայ օր. նստել ի յաւանակի, ագանել ի լերին, բևեռել ի խաչի։

ԾԱՆ. 1. Եթէ հոլովական բառի հոլովիչներն են ա կամ ո՝ ի նախդրով տրականը բացառականի ձև կստանայ և երկդիմութիւն կը պատճառէ (օր. ի մարդոյ, ի սեղանոյ՝ կնշանակէ մարդից, սեղանից, և ոչ թէ մարդի մէջ, սեղանի վերայ)։ Երկդիմութիւնից խուսափելու համար՝ այդպիսի բառերը իրանց ա, ո հոլովիչների փոխանակ գործ են ածում ի հոլովիչ, կամ փոխանակ տրականի դրվում են հայցական հոլովով. օր. տեսաք զԱստուած ի մարմնի, մարդ ի պատուի էր. եդին զիս ի գբի. բնակել ի լոյս, ի սէր, ի մարդ. հեղձանել ի ջուր։

ԾԱՆ. 2. Նոյն պատճառով երբ բառը յոգնակի լինի՝ տրական հոլովով չի գործածուի ի նախդրի հետ, որ չտայ բացառականի իմաստ։ Այս դէպքում տրականի փոխանակ գործածվում է հայցական հոլովը. օր նստել ի տունս, ի քաղաքս, կալ ի բանս։ Ուրեմն յոգնակի հայցականի հետ գործածուելիս՝ ի նախդիրը տալիս է բառին թէ տրականի և թէ հայցականի իմաստ, այսպէս ի տունս, ի քաղաքս նշանակում է թէ դէպի տները, քաղաքները (§ 127, ա, 1) և թէ տներում քաղաքներում (§ 127, բ, 1)։

Գ. Յ ՆԱԽԴԻՐ.

§ 128. Յ նախդիրը գործածվում է միայն հայցականի հետ և նշանակում է

1) Մինչեւ (մի տեղ, մի ժամանակ, մի աստիճան)· օր. երթիցուք ցԲեթղէհէմ, գայ ցտեղին. ցայս վայր խօսել. ցայգ և ցերեկ. ցերբը փորձես. ուտել ցյագ. կռուել ցմահ։

2) Ցրականի նշանակութեամբ՝ ասել, հարցանել բայերին մօտ. օր. ասէ ցաշակերտս. որ խօսէր ցիս. հարցին ցնա։

Դ. ԱՌ ՆԱԽԴԻՐ.

§ 129. Առ նախդիրը գործածվում է

ա) Հայցականի հետ և նշանակում է

1) Ուղղութիւն ղէպի (շնչաւոր առարկաներբի մօտ)· օր. կարդալ առ Աստուած, երթալ առ նա, գալ առ բարեկամս։

2) Համար, պատճառով. օր. ճչել առ ցաւս, առ օր մի. առ այր յիսուն դահեկան. գործել առ չգիտանս, առ պարծել, առ հոգալ, առ սէր որդւոյ։

3) Վերաբերութեամբ, համեմատութեամբ. օր. սէգ առ հանդերձս, հեղգ առ ուսումն, որպէս լոյս առ խաւար։

4) Ունել (համարել) բայի հետ՝ մի բանի

տեղ, փոխանակ. օր. ունել առ լաւս, առ յանցանս, առ ոչինչ գրել։

բ) Տրականի հետ և նշանակում է

1) Պատճառով. օր. աղաղակել առ վշտին, խօսել առ չարութեան, մեղանչել առ տգիտութեան։

2) Մօտ (դադարում). օր. նստաւ առ ծովուն, խօսէր առ արքայի, կայր առ խաչին։

գ) Բացառականի հետ (և այս դէպքում բացառականի ի նախդիրը երբեմն դուրս է ընկնում), և նշանակում է

1) Կողմից. օր. անհնարինքն առ ի մարդկանէ հնարաւորք են առ ի Աստուծոյ. խօսեցաւ առ ի քէն, առ ի հօրէ։

2) Պատճառով. օր. գործել առ երկիւղէ, առ ականէ (երեսանց, աչքի ընկնելու համար), առ ի չգոյէ (տես բ, 1)։

3) Բացառականի նշանակութեամբ. օր. մերկանալ առ ի զգեստուէ, միածին առ ի հօրէ, օգնութիւն առ ի նոցանէ։

դ) Գործիականի հետ և նշանակում է

1) Մօտ. օր. առ բաղաքաւ, առ գետով, առ եզերբ ծովուն. փոքր է այս առ այնու. զինչ է յարդ առ ցորենով։

2) Ժամանակ. օր. առ հարբքն մերովք, առ Արամաւ, առ ջրհեղեղաւ, առ կենդանութեամբ հօր իւրոյ։

Ե. ԸՆԴ ՆԱԽԴԻՐ.

§ 130. Ընդ նախդիրը գործածւում է

ա) Հայցականի հետ և նշանակում է

1) Մէջով. օր անցանել ընդ գետ, ընդ ծով, մտանել ընդ դուռն, անցանել ընդ հուր և ընդ ջուր, ծիծաղել ընդ միտս։

2) Մէջ. օր. մի լիցի կռիւ ընդ իս և ընդ քեզ, ընդ հովիւս իմ և ընդ հովիւս քո չիք. խաիր ընդ բազում և ընդ սակաւ։

3) Դէպի մի կողմ. օր. գնաց ընդ արևելս. հայել ընդ երկինս, ընդ նոսա։

4) Մէկ անգամից, միահամուռ. օր. ընդ հեծեալ և ընդ հետևակ. ընդ այր և ընդ կին. ասել ընդ մի. ընդ ամենայն. ընդ բնաւ։

5) Անորոշ դերբայի կամ բայածականի հետ՝ ժամանակ. ընդ ծագել արեգականն. ընդ բուսանելն չորացաւ. ընդ տեսանելն սքանչացաւ. ընդ երևումն հրաշալւոյն. նոյնպէս՝ ընդ առաւօտս, ընդ երեկս։

6) Ուրախանալ, տրտմել, նախանձել, զարմանալ և նման բայերի հետ՝ վրայ. օր. ուրախանալ ընդ տեսիլն. տրտմել ընդ մահ. զարմանային ընդ վարդապետութիւն նորա։

7) Ցոգնակի հայցականի հետ (փխ. տրականի, հմմտ. § 127, ծան. 2) նշանակում է նաև հետ. օր. խօսել ընդ իշխանս, ընդ միմեանս. վիճել ընդ նոսա։

բ) Սեռականի հետ և նշանակում է փոխանակ, համար. օր. ակն ընդ ական, ատամն ընդ ատաման. տացես նոցա ընդ իմ և ընդ քո. ընդ ամենայն դատարկ բանի համարս տալոց էք։

գ) Տրականի հետ և նշանակում է

1) Հետ, (եզակիի հետ գործածուելիս). օր. խօսել ընդ նմա, ընդ իշխանի. ընդ որում համբուրեցից։

2) Վրայ. օր. հոգալ ընդ տան, ընդ ընտանեաց. գութ ունել ընդ ումեք. անցանեն նեղութիւնք ընդ մարդկան։

դ) Բացառականի հետ և նշանակում է

Կողմից. օր. ընդ աջմէ, ընդ ահեկէ, ընդ հիւսիսոյ, ընդ հարաւոյ։

ե) Գործիականի հետ և նշանակում է

1) Տակ. օր. ընդ ծառով, ընդ հովանեաւ թևոյ, ընդ երկրաւ, ընդ հողով։

2) Մօտը, կողմը, շուրջը. օր. մանկունքս կան ընդ ինև. ընդ այնու ժամանակաւ. պատի ընդ հիւսիսիւ. ած ընդ միջով քով։

Զ. ԸՍՏ ՆԱԽԴԻՐ.

§ 131. Ըստ նախդիրը գործածվում է

ա) Հայցականի հետ և նշանակում է

1) Դուրս, մի բանի այն կողմը. օր. ելանել ըստ դուռն, ըստ քաղաքն. ելանել ըստ հրաման. զերծանել ըստ վտանգս. անցանել ըստ չափ։

2) Զատիով համեմատ. օր. բաժանել ըստ ազգս և ըստ լեզուս. առնուլ հարկ ըստ տուն, ըստ երդ, ըստ գլուխ. շրջել ըստ աշխարհականս. ըստ աճել ջրոյն, ըստ պակասել լուսոյն։

բ) Տրականի հետ և նշանակում է

Համաձայն, նման. օր. եղիցի քեզ ըստ բանի քում. արարին ըստ հրամանին. արար մարդ ըստ պատկերի, ըստ նմանութեան իւրում. դատել ըստ յանցանաց, ըստ կարծեաց։

դ) Բացառականի հետ և նշանակում է

Միմեանց յետեւից, յաջորդաբար. օր. Հայկ և որ ըստ նմանէ նահապետք. մի ըստ միոջէ. ամ ըստ ամէ, օր ըստ օրէ։

2) Կողմից. օր. ըստ հիւսիսոյ, ըստ հարաւոյ, ըստ արևելից կուսէ. ըստ նախախնամութենէ Աստուծոյ։

ԿԱՐԵՒՈՐ ՈՒՂՂԵԼԻՔ

Եր. տող	Տպուած է	Պէտք է լինի
14 22	դ, բաղաձայն	դ բաղաձայնը,
16 3, 13	(§ 26, գ)	(§ 26, ա)
16 17	ե. օր.	է. օր.
18 13	ը կիսաձայնը	յ կիսաձայնը
18 21	փոխու�է է	փոխվում է է
23 1	առմատ սրտ	արմատ սրտ
23 27	ժողով	ժողով
24 24	իսկ ու	իսկ ւ
28 12	§ 26, դ)	§ 26, ա)
31 11	դաս դաս	դաս դասք
41 14	Բ. ինքեանց	Բ. յինքեանց
42 11	(26, գ)	(26, ա)
43 16	էական	էական և ստացական
44 4	§ 26 ա)։	§ 26, բ)։
51 27	4) տես § 26, գ	4) տես § 26, գ և § 89, ծան.
57 23	26, դ),	26, ա),

Արմատ	Ա Ռ Ա Ջ	
Եզանակ	ՍԱՀՄԱՆԱԿԱՆ	
Ժամանակ	Ներկայ	Անց. անկատար
ՊԱՐԶ		
Ա. լծ. ԱՂ	ԱՂ-ամ, աս, այ — ամք, այք, ան	ԱՂ-այի, այիր, այր — այաք, այիք, ային
Բ. լծ. ԳՈՐԾ	ԳՈՐԾ-եմ, ես, է — եմք, էք, են	ԳՈՐԾ-էի, էիր, էր — էաք, էիք, էին
Գ. լծ. ԴԱՏ	ԴԱՏ-իմ, իս, ի — իմք, իք, ին	ԴԱՏ-էի, էիր, էր — էաք, էիք, էին
ԲԱՂԱԴՐԵԱԼ.		
Բ. լծ. ՀԱՏ-ԱՆ	ՀԱՏԱՆ-եմ, ես, է — եմք, էք, են	ՀԱՏԱՆ-էի, էիր, էր — էաք, էիք, էին
Գ. լծ. ՈՒՍ-ԱՆ	ՈՒՍԱՆ-իմ, իս, ի — իմք, իք, ին	ՈՒՍԱՆ-էի, էիր, էր — էաք, էիք, էին
Դ. լծ. ՋԵՌ-Ն	ՋԵՌՆ-ում, ուս, ու — ումք, ուք, ուն	ՋԵՌՆ-ուի, ուիր, ոյր — ուաք, ուիք, ուին
ՊԱՐԶ.		
Դ. լծ. ԹՈՂ	ԹՈՂ-ում, ուս, ու — ումք, ուք, ուն	ԹՈՂ-ուի, ուիր, ոյր 8 — ուաք, ուիք, ուին
ԲԱՂԱԴՐԵԱԼ.		
Ա լծ. ՄԵՐՁ-ԵՆ	ՄԵՐՁԵՆ-ամ, աս, այ — ամք, այք, ան	ՄԵՐՁԵՆ-այի, այիր այր8 — այաք, այիք, ային
Բ. լծ. ԸՆԹ-ԱՆ	ԸՆԹԱՆ-ամ, աս, այ — ամք, այք, ան	ԸՆԹԱՆ-այի, այիր, այր — այաք, այիք, ային
Գ. լծ. ԵՐԿ-ՆՁ	ԵՐԿՆՁ-իմ, իս, ի — իմք, իք, ին	ԵՐԿՆՁ-էի, էիր, էր — էաք, էիք, էին

† Կարող է խոնարհուել նաև՝ Աղ-այց-իմ, իս, ի, իմք, իք, ին,

1) տես § 109. ծան. 2) տ. § 110. ծան. 1. 3) տ. § 108. ծան.

§ 118 ԱՂԻԻՍԱԿ ԲԱՅԵՐԻ ԿԱՆ

Ի Ն Ա Ր Մ Ա Տ

ՍՏՈՐԱԴԱՍ.	ԱՐԳԵԼԱԿԱՆ	ԴԵՐԲԱՑ	
Ներկայ	Ներկայ	Անորոշ	Ապ
Աղ-այց-եմ, ես, է — — եմք, էք, են †	մի Աղ-ար — այք	Աղ-ալ	Աղ-ա
Գոր̊ծ-ից-եմ, ես, է — — եմք, էք, են	մի Գոր̊ծ-եր — էք	Գոր̊ծ-ել	Գոր̊ծ-
Դաս-ից-իմ, իս, ի, — — իմք, իք, ին	մի Դաս-իր — իք	Դաս-իլ (ել)	Դաս-ե
Հաստան-ից-եմ, ես, է — — եմք, էք, են	մի Հաստան-եր — էք	Հաստան-ել	Հաստան
Ուսման-ից-իմ, իս, ի — — իմք, իք, ին	մի Ուսման-իր — իք	Ուսման-իլ(ել)	Ուսման-
Զեռն-ուց-ում, ուս, ու — — ումք, ուք, ուն	մի Զեռն-ուր — ուք	Զեռն-ուլ	Զեռն-
Թող-ուց-ում, ուս, ու — — ումք, ուք, ուն	մի Թող-ուր — ուք	Թող-ուլ	Թող-ւ
Մերձեն-այց-եմ, ես, է — — եմք, էք, են	մի Մերձեն-ար — այք	Մերձեն-ալ	Մերձն
Ընթան-այց-եմ, ես, է — — եմք, էք, են	մի Ընթան-ար — այք	Ընթան-ալ	Ընթան
Երկնչ-ից-իմ, իս, ի — — իմք, իք, ին	մի Երկնչ-իր — իք	Երկնչ-իլ(ել)	Երկնչ

, եթէ կրաւորական նշանակութիւն ունի։ § 102, ծան.։ †† Կարո

Ա. Ց		Ե Ր Կ Ր Ո Ր	
		Ս Ա Հ Մ Ա Ն Ա Կ Ա Ն	
պառնի		Անց. կատարեալ	Պարզ ապ
	ԲԱՂԱԴՐԵԱԼ.		
-ա-լոց	Ներգ. ԱՂԱՑ	†† ԱՂԱՑ-ի, եր, — — աք, իք, ին	ԱՂԱՑ-ից, ցեւ — ցուք, ՉԻ
ՐԾ-ե-լոց	ԳՈՐԾ-ԵՑ	ԳՈՐԾԵՑ-ի, եր, —՝ 3 —աք, իք, ին	ԳՈՐԾԵՑ-ից, ցուք, ՉԻ
Տ-ե-լոց 6	Կրաւ. ԴԱՏ-եց	ԴԱՏԵՑ-այ, ար, աւ —աք, այք, ան	ԴԱՏԵՑ-այց, — ցուք, Չ
	ՊԱՐՉ		
ՏԱՆ-ե-լոց	Ներգ. ՀԱՏ	ՀԱՏ-ի, եր —՝ 7 — աք, իք, ին	ՀԱՏ-ից, ցեւ, — ցուք, Չ
ԱՆ-ե-լոց 6	Կրաւ. ՈՒՍ	ՈՒՍ-այ, ար, աւ — աք, այք, ան	ՈՒՍ-այց, ցի — ցուք, Չ
ՌՆ-լոց 6	Կրաւ. ՋԵՌ	ՋԵՌ-այ, ար, աւ, աք, — աք, այք, ան	ՋԵՌ-այց, ցի — ցուք Չի
	ՊԱՐՉ		
Ղ-լոց 6	ԹՈՂ	†† ԹՈՂ-ի, եր, —՝ 7 — աք, իք, ին	ԹՈՂ-ից, ցեւ — ցուք, Չ
	ԲԱՂԱԴՐԵԱԼ.		
ՐՉԵՆ-ա-լոց	Կր. ՄԵՐՉ-ԵՑ	ՄԵՐՉԵՑ-այ, ար, աւ — աք, այք, ան	ՄԵՐՉԵՑ-այց — ցուք, Չ
ԹԱՆ-ա-լոց	Կր. ԸՆԹ-ԱՑ	ԸՆԹԱՑ-այ, ար, աւ — աք, այք, ան	ԸՆԹԱՑ-այց, — ցուք, Չ
ՆՉ-ե-լոց 6	Խառն ԵՐԿ-ի	ԵՐԿԻ-այ, ար, աւ — աք, այք, ան 9	ԵՐԿԻ-այց, 10 — ցուք, Չ

ւրող է երկրորդ արմատի բոլոր ձեւերում խոնարհուելնաև կրաւ

Դ Ա Ր Մ Ա Տ

	ՀՐԱՄԱՅԱԿ.	ԴԵՐԲԱՅ	
ապառնի	Կատարեալ	Ներկայ	Անցեալ
ցես, ցէ Ջիք, ցեն[1]	ԱՂԱ՛ 2 ԱՂԱՑ-էք	ԱՂԱՑ-ող	ԱՂԱՑ-եալ
ից, ցես, ցէ Ջիք, ցեն 1	ԳՈՐԾԵԱ՛ 2 ԳՈՐԾԵՑ-էք	ԳՈՐԾ-ող 4	ԳՈՐԾ-եալ 5
ց, ցիս, ցի ք, Ջիք, ցին 1	ԴԱՑԵԱ՛Ց ԴԱՏԵՑ-արուք	—	ԴԱՏ-եալ 5
ցես, ցէ , Ջիք, ցեն ցիս, ցի , Ջիք, ցին ցիս, ցի, Ջիք, ցին	ՀԱ՛Տ, — էք ՈՒՍ-էր — արուք ՋԵՌ-էր, այք, արուք	ՀԱՏ-ող, հատա [նող — ՋԵՌ-ող	ՀԱՏ-եալ ՈՒՍ-եալ ՋԵՌ-եալ
ցես, ցէ , Ջիք, ցեն	ԹՈ՛Ղ — էք	ԹՈՂ-ող	ԹՈՂ-եալ
այց, ցիս, ցի , Ջիք, ցին 1 այց, ցիս, ցի , Ջիք, ցին 1 10, ցես, ցէ , Ջիք, ցեն 10	ՄԵՐՁԵՑ էր այք, արուք ԸՆԹԱՑ էր — արուք ԵՐԿ-էր ԵՐԿԵ այք, րուք 11	ՄԵՐՁԵՑ-ող ԸՆԹԱՑ ող —	ՄԵՐՁԵՑ-եալ ԸՆԹԱՑ-եալ ԵՐԿՈՒՑ-եալ 12